№ 30 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 11 ՓԵՏՐՎԱՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 11 ՓԵՏՐՎԱՐԻ № 30

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ,
որոշած լինելով կազմակերպել մարտի 7-ին, ս. Գր. Լուսաւորչի տօնի օրը հանգանակութիւն
Յօգուտ փախստական-գաղթականների,
խնդրում է գաւառական գործիչներին աջակցել ընկերութեան վարչութեանը՝ տարածելու հայ ժողովրդի մէջ Տ. Նազարեանի նուիրած 12,500 հատ
«Ղևոնդ Երէցը օրհնում է ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ զօրքը»
գեղեցիկ պատկերը, որ պատրաստված է արտասահմանում և ամեն մի հայ ընտանիքի զարդը կարող է կազմել։
Պատկերի հատն արժէ 20 կ.։ Այն անձինք, որոնք կը կամենան ստանալ մեծ քանակութեամբ յիշեալ պատկերից, պէտք է այդ մասին յայտնեն վաղօրօք հետևեալ հասցէով. Редакція «Мшакъ», для Общества «Нпастаматуйцъ». (ա.օ.) տ. 81. 5—1

Պատերազմում վնասված հայ կամաւորների ընտանիքներին խնամող կոմիտէն
(«ՄԵՂՈՒ» աշխատանքի տան ընկերութեանը կից) բանալով Հաւլաբարում ձրի ճաշարան հայ կամաւորների չքաւոր ընտանիքների համար, դիմում է հայ սրտացաւ հասարակութեանը և խնդրում օգնութիւն մթերքներով և փողով։ Փողով նուէրները կարելի է ուղարկել ընկերութեան գանձապահուհի տ. Վ. Շահպարոնեանին՝ Ртищевская 13. իսկ մթերքներով նուէրները կարելի է ուղարկել՝ Лазаревская, № 1. (օ.մ.) 82. 3—1

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է երգիչ-երգչուհիներին, որոնք կը կամենային մասնակցել մարտի 7-ին յօգուտ փախստականների տրվելիք Հոգևոր համերգին, դիմել ամեն օր, երեկոյեան ժամը 6—7-ը տ. Հ. Մարտիրոսեանի բնակարանը (Мадатовская, № 7), ուր կը կատարվի ձայների փորձ ԳՐ. ՄԻՐԶԱՅԵԱՆԻ ձեռքով։
Խնդրվում է ցանկացող երգիչ-երգչուհիներին դիմել մինչև փետրվարի 15-ը։
(ա. օ.) տ. 79. 4—3

Սահմանամերձ հիւանդ գաղթականներին բժշկական օգնութիւն հասցնելու համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ԲԺԻՇԿՆԵՐ ԵՒ
ՖԵԼԴՇԵՐՆԵՐ
պայմանների մասին դիմել՝ Թիֆլիս, Աբաս-Աբադսկայա հրապ. № 7.
տ. (2.) 80. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ց. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուէ հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սոլոլակ՝ Րտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(չ. ու. կ.) տ. 875. 70—59

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏ

Ինչպէս հաղորդում են Պետրոգրադի լրագիրները, ֆրանսիական կառավարութիւնը հրատարակել է մի դեկրէտ, որով սահմանում է, որ գերմանական զօրքերով գրաւված երկիրների ազգաբնակութեան կրած վնասները պէտք է հատուցանվեն պետական գանձարանի կողմից։

Հիմնվելով այդ օրինակի վրա, «Нов. Вр.» թերթը իր առաջնորդող յօդուածի մէջ (փետրվարի 5-ի համարում) այն միտքն է արծարծում, թէ պատերազմական գործողութիւններից վնասված վայրերի ազգաբնակութեան կրած վնասները պէտք է հատուցանվեն պետութեան միջոցներով և ոչ բարեգործական միջոցներով։ Բարեգործական միջոցները, հանգանակութիւնները, ժողովարարութիւնները—դրանք ամենքը մի տեսակ ողորմութիւն են. բացի դրանից նրանք, անկարող են ցոյց տալ այն իրական օգնութիւնը, որ անհրաժեշտ է։ Պէտք է իբրև սկզբունք ընդունել այն, որ Ռուսական կայսրութեան ամեն մի քաղաքացի իրաւունք ունի յետ ստանալ այն վնասները, որոնք նա կրել է թշնամու օկուպացիայից։

«Եթէ Ռուսական Կայսրութեան բոլոր քաղաքացիները պարտաւոր են համբերաշխ լինել—գրում է թերթը—այն մեծ ռազմական գործում, որ սկսվել է ոչ իրանց կամքով, դրանից տրամաբանական անհրաժեշտութեամբ հետևում է, որ ամեն մի քաղաքացի իրաւունք ունի աջակցութիւն գտնելու պետութեան կողմից այն դէպքում, եթէ նրան բաժին է ընկել, ոչ իր մեղքով, մեծ ծանրութիւն»։

Թշնամու պատճառած վնասների փոխարինութեան սկզբունքը եթէ ընդունվի իբրև ընդհանուր սկզբունք, պէտք է ընդունել, որ այդ սկզբունքը պէտք է տարածվի և այն ազգաբնակութեան վրա, որ վնասվել է շնորհիւ իր ցոյց տուած համակրութեան կռւող կողմերից մէկին։

Անհերքելի իրողութիւն է, որ ներկայ Թիւրք-ռուսական պատերազմում, Թիւրքիայի և Պարսկաստանի քրիստոնեայ (հայ և ասորի) ազգաբնակութիւնը մեծապէս վնասվեց այն պատճառով, որ նրա ամբողջ համակրութիւնը Ռուսաստանի կողմն է, իբրև քրիստոնեայ և քրիստոնեաներին հովանաւոր պետութեան կողմը։ Բացի դրանից, որովհետև ռազմագիտական նկատումներով ռուսական զօրքը տեղափոխվեց Ատրպատականում մի տեղից միւսը, ուստի և քրիստոնեայ ազգաբնակութիւնը ստիպվեց զօրքի ետևից գալ և թողնել իր գոյքը ու ահագին վնասներ կրել։ Անշուշտ, կրած վնասները, եթէ հատուցանվեն պետութեան կողմից, պէտք է ապագայում յետ ստացվեն այն երկրից, որ պատճառ է եղել աղէտներին, այն է Թիւրքիայից։

Քրիստոնեայ փախստականներին օգնութիւն հասցնելը, նրանց կրած ահագին վնասները փոխարինելը պետական գործ է և ոչ թէ մասնաւոր կամ հասարակական բարեգործութեան գործ, որ կարող է միայն ամոքել շատ չնչին չափով վէրքերը և կարիքները։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 փետրվարի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասի զօրաբանակի շտաբի կողմից.

Փետրվարի 8-ին տեղի ունեցան ռազմական ընդհարումներ Անդրճորոխեան երկրում, որոնց ժամանակ Թիւրքերը վանվեցին Իչխալսի գետի այն կողմը։

Մնացած ուղղութեամբ ընդհարումներ չեղան։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Իր վերջին հաղորդագրութեան մէջ Թիւրքաց շտաբը իր կորուստները կովկասեան պատերազմաբեմում հաշւում է 190,000 սպանված, գերի և վիրաւոր, որոնցից 2000-ը օֆիցէրներ։

◆ Տրապիզոնից փախած երկու ռուս պատմել են, որ Սև ծովի նաւատորմի յաջող ռմբակոծութիւնը ստիպել է փախչել համարեա բոլոր ազգաբնակութեանը։

◆ Ալէքսանդրա Լվօվնա Տօլստայան, որ աշխատում է Իգդիրում, համառուսական զեմստվային միութեան լազարէթում, «Р. Вѣд.»-ի մէջ նկարագրում է հայ-փախստականների դրութիւնը. «Ես երբեք տեսած չեմ այսպիսի տանջանքներ,—գրում է Տօլստայան.—դժբաղդները զրկվել են ամեն ունեցածից։ Եւ մտածեցէք, այդպիսի մարդկանց թիւը, ինչպէս ասում են, մօտ 40,000 է»։

◆ Դարդանէլի վերջին ռմբակոծութեանը մասնակցում էին 12 խոշոր թնդանօթներ։ Միաժամանակ անգլիական օդագնացները թռիչք էին կատարում Նեղուցի վրա։ Վնասները չափազանց զգալի են։ Դաշնակիցների թնդանօթները կրակեցին 600 անգամ, որոնք պայթեցրին վառօդի պահեստները։ Դաշնակիցների նաւերը չը տուժեցին։

◆ «Н. В.»-ին հեռագրում են Սէվաստօպօլից, որ «Գեբէնը», վերջին կռւում ստացած լուրջ վնասուածքների պատճառով, հանված է նաւատորմի կազմից։

◆ Կ. Պոլսում հացի զգալի պակասութիւն է։ Ֆինանսական ճգնաժամը իր կողմից է դրութիւնը տագնապալի դարձնում։ Կառավարութիւնը աճուրդի է հանել առևտրական նաւերը։

◆ «Բրէսլաու»-ի ստացած վնասուածքները լուրջ են համարվում։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դարդանէլի ռմբակոծութիւնը

Անցել է երեք ամիս այն օրից, երբ անգլօ-ֆրանսիական միացեալ նաւատորմը՝ ընդհանուր թւով մօտ 12—14 պատերազմական նաւեր՝ զինված 8—12 դիւյմանոց թնդանօթներով, կանգնած Դարդանէլի առաջ, կտրել են նրա մուտքը թէ ներսից՝ Պոլսից և թէ դրսից։

Այս երեք ամիսների ընթացքում Թիւրքիայի դէմ յայտարարած պատերազմի միայն առաջին ամսում էր, որ միացեալ նաւատորմը մի քանի անգամ ձեռնարկեց Դարդանէլի ամրութիւնների դէմ լուրջ գործողութիւններ. դրանից յետոյ գրեթէ երկու ամիս այդ նաւատորմը աւելի շուտ մի սպառնալիք էր Թիւրքիայի համար, քան այդ սպառնալիքի իրագործում։

Եւ դա հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենանք, որ Դարդանէլը Հիբլարտարից յետոյ աշխարհիս երեսին երկրորդ ամրութիւնն է, որը ոչնչացնելու համար պահանջվում են յարձակվող կողմից ահագին ոյժեր և դրանցից աւելի մեծ զոհեր։ Քսան և հինգ տարիների ընթացքում Դարդանէլը ամրացված է երկու ցամաքներից էլ ամենահիմնաւոր կերպով. եւրոպական պատերազմական տեխնիկան ձեռք է առել ամեն միջոցներ Թիւրքիայի այդ ամենակարևոր դուռը և Պոլսի բանալին դարձնել անառիկ՝ թշնամու համար. ահա այդ նպատակով, օգտվելով Դարդանէլի բնականից վերին աստիճանի լաւ պաշտպանված դիրքերից, շինված են նրա վրա մեծաքանակ արհեստական ամրութիւններ, իսկ նեղուցը պաշտպանված է ստորերկրեայ ականների այնպիսի խիտ ցանցով, որ անցնել նրա միջով համարվում է անհնարին։

Անգլիական ռազմագէտ-ինժեներներից մէկի կարծիքով, որին շատ լաւ յայտնի են Դարդանէլի ամրութիւնները, «անհնար է առանց մեծամեծ զոհերի անցնել Դարդանէլը», իսկ մի ուրիշ նոյնքան հեղինակաւոր ինժեների կարծիքով ընդհանրապէս անհնար է Դարդանէլով անցնել։

Պարզ է, որ այդպիսի պայմաններում հեռագրական այն տեղեկութիւնները՝ թէ միացեալ նաւատորմը ամսիս 6—7-ին սկսել է ռմբակոծել Դարդանէլի ամրութիւնները և դրանով նրա եւրոպական մասին խոշոր վնասներ է հասցրել, դրանք ոչ այլ ինչ են եթէ ոչ բարոյական ահաբեկման միջոցներ, որովհետև եթէ նոյնիսկ չը լինեն այդ ամրութիւնների վրա դրված թիւրքական մեծաքանակ թնդանօթները, այնուամենայնիւ Դարդանէլը դժուարանցանելի է շնորհիւ միմիայն ստորջրեայ ականների։

Եւ այսպէս եթէ միացեալ նաւատորմի գործողութիւնները ուղղված են Դարդանէլի ամրութիւններին լոկ նիւթական վնասներ հասցնելու և ապա ահաբեկելու նրա պաշտպաններին, այդ դէպքում ինչպէս պնդում են հեղինակաւոր անձինք, ռմբակոծումը հասել է իր նպատակին, սակայն դա չէ այն միջոցը, որով հնարաւոր է անցնել Դարդանէլը, վերցնելու համար Պոլիսը։

Այս վերջին նպատակին հասնել կարելի է ուրիշ ճանապարհով—մի շատ ուժեղ դեսանտ հանելով թէ ասիական, նոյնպէս և եւրոպական ափերի վրա, և նրա վրա յենված մօտենալ Կ. Պոլսին արևմուտքից և արևելքից։

Իսկ այդ միսսիան, անշուշտ, ընկնելու է մեր Սև-ծովեան նաւատորմի վրա։ Միմիայն Ռուսաստանն է, որ կարող է լուրջ սպառնալիք դառնալ Կ. Պոլսի համար։ Գալով Միացեալ Պետութիւնների նաւատորմին, նա կարող է միայն մեծապէս նպաստել ռուսական գործողութիւններին ծովից ու ցամաքից, իր ուժեղ կրակով ահաբեկելով պաշտպաններին։ Ա. Երկաթ

ԱՐԵԱՆ ԳԻՐ

(Սեփ. Թղթակցից)

II

Արդանուշի շրջանում միայն երկու հայ գիւղ կայ՝ Տանձոտ և Ռաբաթ։ Ռաբաթցիք երբ լսել էին Շաւշէթի գաւառի Օքրոբագետ, Սաթլէշ, Մամանելիս և Բարա հայ գիւղերի կոտորածն ու կործանումը աջարացիների ձեռքով՝ թողել փախել էին Արդահան ու ազատվել։ Իսկ Թիւրքերը Տանձոտին էլ գնացել տիրացել էին Արդանուշի հետ միասին։ Ինչ կատարվում էր Արդանուշում, նոյնը շարունակվում էր նոյնպէս և Տանձոտում, ուր 140 տուն հայ ապրում էր 180 տուն Թուրքի հետ միասին։

Անշուշտ Թիւրքերով շրջապատված, Թուրքերի մէջ խեղդված այս հայերը հնար չունէին ժամանակին զինվելու և մաքառելու իրանցից յիսուն անգամ աւելի ուժեղ Թուրքերի դէմ, մանաւանդ որ Բաթումի նահանգապետը Թուրքերին զէնք կրելու արտօնութիւն միշտ տալիս էր անհամեմատ չափերով, իսկ հայ վաճառականներն անգամ մեծ դժուարութեամբ էին կարողանում զէնք կրելու արտօնութիւն ստանալ։

Այս խնդիրների խորը թափանցել չէր ուզում փաշան, այլ ցանկանում էր անպատճառ հայ կամաւոր զինւորներ գտնել Արդանուշում և նրանց կախաղան հանելով սարսափեցնել մնացողներին, որ էլ մարդ չը յանդգնի որևէ շարժում անել Թիւրքերի դէմ։ Մանաւանդ որ այդ խուզարկութիւնն ամենից նպաստաւոր էր, այդ պատրւակով խուզում էր սրա-նրա գրպանը և նրանց ծնողներից առատ փէշքէշներ առնում։ Հայ կիների ճակատի, կրծքի ոսկիները, գոհարներն ու զարդերը կամաց-կամաց գնում լցվում էին փաշայի սնդուկը։

Փաշայի զաբիթները խրար հաւից ամեն օր խուզարկում էին տները, կենսական ամեն տեսակ մթերք տանում զինւորների (реквизиція) համար։ Քիչ-քիչ քամում էին այն բոլորը, ինչ որ արդանուշցին, Թիւրքերի ձեռքից ազատվելուց յետոյ, 37 տարվան ընթացքում էր ունեցել։ Թէև շատ էին վշտանում բոլորը, սարսափների մէջ էին ապրում, բայց մի կերպ համբերում էին, յուսալով որ շուտով մեր բանակը կը հալածէ Թիւրքերին, կազատվեն վերջիններիս գազանային ճիրաններից։

Բայց էլ համբերելն անհնար էր։

Մանաւանդ դեկտ. 10-ից յետոյ, երբ ռուս. բանակը մտաւ Օլթի, Սարիղամիշ և երբ վերջապէս լուր հասաւ, թէ Արդահանի, Օլթիի և Սարիղամիշի թումբերի տակ Թիւրքական բանակները կոտորվել, գերվել և ցրվել են, փաշան և զօրականներն սկսեցին իրանց պահանջները սաստկացնել. վաճառականներին բռնեցին, բանտարկեցին և ծեծեցին, որ իրանց փող տան։ Սրանց ահաբեկելու համար սկսեցին մի կողմից սպանել, առանց ուշք դարձնելու ոչ տարիքին, ոչ աստիճանին, ոչ էլ դիրքին։ Սպանեցին Պօղոս Կազանչեանին, որ 82 տարեկան մի ալևոր, բայց ժիր ծերունի էր. սպանեցին Բժիկեան Ստեփանին, որ մի 40-ամեայ երիտասարդ և հարուստ վաճառական էր. Մաղօյեան Զաքարին տանջանքի տակ սպանեցին, որ իրանց փող վճարէ. և այսպէս անվերջ։

Բաւական չէր փողոցներում, պատերի տակ կոտորածները, նրանք, որոնք հնարաւորութիւն չունէին փրկանք տալու, նրանց երկար տանջելուց և չարչարանքների մատնելուց յետոյ, առանց ուշք դարձնելու նրանց հասակին ու դիրքին, թշւառութեան ու աղքատութեան, մահվան դատապարտեցին, այնպիսի մահով սպանեցին, որ միայն յատուկ է Թաթարական բարբարոսութեան։ Արդանուշի արևելեան-հիւսիսային կողմը, ապառաժի գլխին դեռ կանգնում են այն գեղաշէն տաճարի որմերը, որոնք միջին դարերում բարձրացված են սրբատաշ քարերով և այնքան ճարտարութեամբ։ Այս տաճարից դէպի ցած, անդնդախոր ձորի վրա գտնվում են այն այրերը, որոնք բերդի հարս աղջիկներին պատսպարել են հինգ դար շարունակ Թաթարական խժդժութիւններից։

Ահա այդ տաճարի մօտ, ժայռի բարձունքից վայր գլորեցին այն թշուառներին, որոնք փրկանք տալու հնարաւորութիւն չունէին։ Այդ ժայռից մօտ հօթանասուն սաժէն բարձրութիւնից Ջէհէննէմ-դէրէ (դժոխային ձոր) գլորեցին խեղճ ժողովրդին՝ դէպի Արդանուշ գետի ափը, դէպի Էլէննից և Ցովակենց ադաները (կղզիներ), ուր ոչ անցք կար գնալու, ոչ հնարք կար վերցնելու և տանելու թաղելու։ Մօտ մի ամիս յետոյ չարակոծ կանայք մի կերպ իջան Ջէհէննէմ-դէրէ և թաղեցին՝ ում դիակն որ գտան։

Դեկտեմբերի 15-ից մինչև յունվարի 5-ը սպանվածների թիւը 123-ի հասաւ։ 800 տնւոր մի աւանի համար սա մի սոսկալի թիւ է։ Տուն չը մնաց, որ վայնասուն չը բարձրանայ, մարդ չը մնաց, որ չը սգայ ոչ միայն իր հարազատի մահը, այլ ողջ մնացողների և իր սեփական գլուխը։ Ամեն օր սարսափ ու շիւան, լաց ու ողբում էր։ Կոտորում էին ոչ միայն փողոցում, շուկայում, ճանապարհին, այլ նոյնիսկ սեփական տան մէջ։ Մայրերը իրանց զաւակներին այլ ևս տնից դուրս չէին թողնում, էլ ամուսինները փողոց չէին համարձակվում գնալու, իսկ անօրէնները տնից-տուն մտնում էին գալիս և բռնածին գլորում։

Թիւրքերը վճռել էին բոլոր հայ տղամարդկանց կոտորել, ոչնչացնել բնաջինջ անելով Արդանուշը։ Կանանց ձեռք չէին մեկնում, միայն 8 կին և 2 աղջիկ են սպանված ամբողջ 60 օրվան ընթացքում։ Թիւրքերի նպատակն էր արուներին ջնջել։ Այս պատճառով շատ մայրեր ու կանայք, իրանց որդիներին ու ամուսիններին թաքցնում էին տների խորքերում, նկուղներում և սառցատներում, նոյնիսկ նրանց ապրած վայրերի բերանները քարով, հողով ծեփում, որպէսզի Թիւրքերը նրանց չը գտնեն, չը սպանեն։

Այսպիսով Արդանուշի կանայք կարողացան մահվան ճանկերից փրկել 93 տղամարդ, որոնք իրանց կեանքը պարտական են կանանց։

Այս սարսափելի վիճակից Արդանուշը ազատվեց շնորհիւ մեր քաջարի զինւորների անդրդւելի կռիւների, որոնք ոչ մի զոհաբերութիւն կը խնայեցին Թիւրքերի զօրքը հալածելու երկրից։ Թէև այսօր Թիւրքերը հալածված են, բայց նրանց մի մասը հետ լազերն ու տեղական Թուրքերը միացած դեռ մաքառում են Վարձխաթում, Սագարայում, Ախզայում, Գիւմիւշխանէում, Դօլուսխանէում մեր զօրքի դէմ։ Անշուշտ շատ շուտով սրանք էլ կը ջարդվեն, բայց մինչև իսպառ բնաջինջ դառնալը վնասներ են տալիս երկրին, զօրքին և ժողովրդին։

Հայերից մեռածների մեծագոյն մասը տասն օրով, ամսով անթաղ էին մնացած, շնորհիւ Թիւրքերի գազանային պահանջների։ Պէտք է մեռելի տէրը հարկ ու փէշքէշ տար, որ թոյլ տային թաղելու։ Շատերին թաղեցին Ցովակիմի անտառում, շատերին Էլէննից-ադայի (կղզի) մօտ, շատերին նոր գերեզմանոցում, իսկ դեռ շատերը կան անթաղ, որոնց դիակներն անգամ չեն գտնված։ Այն թշւառ կանայք երանի են տալիս նրանց, որոնք գտան իրանց մեռելներին և հողին յանձնեցին, իսկ իրանք դեռ փնտռում են, չեն գտնում գոնէ մեռածների դիակները։

Այսօր մնացած կանայք ու երեխաները ոչ հաց ունեն ուտելու, ոչ անկողին պառկելու, ոչ հալաւ, կօշիկ՝ հագնելու, ոչ էլ սայլ կամ սահնակ ունեն Արդանուշից փախչելու և մահվան ճիրաններից ազատվելու։ Անհրաժեշտ է օր առաջ նրանց հեռացնել այդ դիականացած քաղաքից, մինչև պատերազմի վերջը պահպանելու։ Ապա թող իրանք որոշեն՝ կը վերադառնա՞ն ծխացնելու Արդանուշի բերդի ծխանները, թէ կը ձուլվեն մի ուրիշ քաղաքում։

Ասպետ

Արդանուշ

ՔՐՈՆԻԿ

(Սեփ. Թղթակցից)

Հայաստանի լուրերը այս վերջին երկու շաբաթուան մէջ ոչ միայն առաջին օրերուն բերկրալից հանգամանքը չունէին, այլ մեզ մեծ անձկութեամբ համակեցին պահ մը։ Դէպի Երզրում ու Վան ռուս բանակին յաղթական յառաջխաղացութեան տեղ, Թիւրք բանակն էր որ՝ ըստ հեռագիրներուն՝ կը մտնէր մէկ կողմէն Պարսկա-Հայաստան, միւս կողմէ Կովկաս, Պարսկաստանի այլ և այլ մահմեդական ցեղեր կը միանային թիւրք զօրքերուն՝ կաւերէին, կը կոտորէին ու կը յառաջանային մինչև Ուրմիոյ լիճը. անդին, թիւրք բանակը, իր գլուխն ունենալով Էնվէրն ու Լիման ֆօն Սանդէրսը, կը գրաւէր Օլթին, Արդահանը, կը մօտենար Սարըկամըշին, կը սպառնար Կարսին... Սոսկումով աչքի առջև կը բերէինք հայ ազգաբնակութեան եղերական կացութիւնը՝ Թիւրքական, Պարսկական Հայաստանի և նոյնիսկ Կովկասի այդ քանի մը մասերուն մէջ, ուր թիւրքը՝ մեզի անհասկանալի մնացող և մեզ մեծապէս վրդովեցնող յաջողութեամբ մը՝ ետ կը մղէր ռուս ուժերը. կը մտածէինք աւելի ևս ահաւոր հետևանքներուն վրայ, որ ամբողջ հայ ցեղին պիտի սպառնային, եթէ այդ սև յառաջխաղացութիւնը շարունակէր։ Այս ամենը անձկութեամբ կը լեցնէին մեզ, բայց երբէք չյուսահատեցանք, ու երբէք չկարողացանք մտածել, թէ թիւրքական այդ յաջողութիւնը տևական պիտի ըլլար. սրտադողով, բայց և անխախտ հաւատքով լեցուն, սպասեցինք գալիք բարի լուրերուն, որ մեզի պիտի աւետէին թիւրքին ժամանակաւոր յաջողութեան կասեցումը և ռուս հզօր բանակին վերարշաւումը, վճռական ու անդառնալի յառաջացումը դէպի Թիւրքաց Հայաստան։ Հեռագիրները մեզի բերին մեր յուսացածէն աւելի մեծ աւետիս մը. Սարըկամըշի և Արդահանի մէջ, կատաղի կռիւներէ յետոյ, թիւրք բանակը կրեր է պարտութիւն մը, այնքան ջախջախիչ, այնքան ամբողջական, որքանը իր պատմութեան մէջ ան երբէք չէ կրած։ Ֆրանսական լրագիրները ողողուած են ռուսական այդ մեծ յաղթանակին մանրամասնութիւններովը։ Ովքեր են այն զօրապետները, ղեկավարները, որ այդ յաղթանակը իրականացուցած են. անուններ չեն յիշուիր։

Լրագիրները կանուանեն միայն ու կը փառաբանեն—և ի՛նչքան հաճելի է ատիկա մեզի համար—Կովկասի վեհոգի փոխարքան՝ կոմս Վօրօնցով-Դաշկովը, կը յօրջորջեն զայն «Սարըկամըշի յաղթականը», կը հրատարակեն իր կենդանագիր, և այս առթիւ կը դրուատեն իր փոխարքայութեան սկիզբէն մինչև այսօր կատարած իմաստուն ու արդիւնաւոր դերը, ցոյց տուած ազատամիտ ու արդար ոգին։ Յաղթանակը ահագին է, արտակարգ. Թիւրք ամբողջ զօրաբաժին մը գերի բռնուած է իր սպայակոյտով, որուն մէջ է նաև համբաւաւոր Իպզէթ-փաշան, Թիւրքիոյ նախկին պատերազմական մինիստրը։ Ուրիշ զօրաբաժին մը, ջարդուփշուր եղած, ձիւնապատ լեռներուն մէջէն կը փախչի, և ռուս բանակը, որ զայն կը հալածէ՝ վստահ է անոր կտորուանքներն ալ գերելու. Հայաստանը թիւրք բանակին մէջքը կոտրած է. «Այլ ևս,—կըսեն լրագիրները,—ռուս բանակին առջև ճամբան բաց է մինչև Էրզրում»։ Ռուս բանակին հմայքը հոյակապօրէն վերականգնուած է, մահմեդական զանգուածին սրտին մէջ՝ ռուսին սարսափը վերահաստատուած. Կ. Պոլսոյ թիւրք կառավարութեան, ինչպէս և գերման սպաներու Ջօլիին համար՝ հարուածը մահացու է. Թիւրքերու ներքին պառակտումները պիտի շեշտուին անշուշտ անոր հետևանքով. ու պարսից կառավարութիւնը արդէն կը փութայ թիւրք կառավարութեան պաշտօնապէս ծանուցագիր ղրկել, սպառնալով զէնք բարձրացնել՝ եթէ Ատրպատականէն չքաշուին թիւրք զօրքերը։ Այս երկու երեք շաբթուան ընթացքին, այն բոլոր ճամբաներուն վրայ, ուրկից թիւրք բանակն անցաւ, հայ ազգաբնակութիւնը մեծ աղէտներու ենթարկուած է անշուշտ. բայց հայը՝ այս անգամ չի ներկայանար իբր միմիայն կոտորուող. լրագիրները, ու «Թանը» մանաւանդ, որ այդ մեծ դէպքին վրայ՝ ասորի ծանօթ գործիչ և հայոց դատի բարեկամ պ. Խայրալլահի ընդարձակ մէկ յօդուածը հրատարակեց երէկ, ակնարկելով այդ աղէտներուն, կը յիշատակէ ու կը շեշտէ հազարաւոր հայ կամաւորներուն կատարած դերը։ Ինչքան անհամբերութեամբ կը սպասենք կովկասեան թերթերուն, աւելի մանրամասն ու որոշ տեղեկութիւն ունենալու համար այն բաժինին վրայ, զոր այդ փառաւոր յաղթանակին մէջ ունեցած են ռուս բանակի հայ զինուորներն ու հայ կամաւորները։

Ապրի՜ ազատարար ռուս բանակը, ապրի՜ն անոր հզօր հովանւոյն տակ կռուող հայ կտրիճները, և ապրի՜ մեր հինաւուրց Աստուածը, որ վերջապէս կարելիութիւն կուտայ հայուն իբր «կռուող» ցեղ նորէն ու շքեղօրէն ի հանդէս գալ աշխարհիս թատերաբեմին վրայ, և որ ներողամիտ քմծիծաղով մը ականջը գոցելով մեր շղթայեալ եղբայրներուն կեղծ աղօթքին՝ ցեղին սրտէն բղխած անկեղծ աղօթքը կը լսէ։

Պարիզ, 10 յունվ. Ա. Չօպանեան

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*)

(Սեփական թղթակցից)

IV

Միաժամանակ արևելեան հարցը թևակոխում էր իր ամենակրիտիքական փազիսներից մէկում. բալկանեան սլաւոնների հոգեվարքային ճիչերը դղրդում էին բովանդակ Եւրոպայում և մասնաւորապէս Ռուսաստանում։ Մարդկային ցեղը, ինչպէս նաև պարզ անհատը, ենթակայ է որոշ հոգեկան փոփոխութիւնների և երերայաջորդ տրամադրութիւնների, որ կարելի է անուանել խանդավառութեան և գործնականութեան շրջաններ. հեծեծող սլաւոնների ապստամբութիւնը բարեբաղդաբար զուգադիպեց մէկը այն խանդավառութեան շրջաններին, երբ ազգերը, կարծես մոռացած իրանց առևտրական շահի բնազդները, հետեւում են աւելի բարձր և ազնիւ հոգեկան մղումների և թելադրութիւնների, և հոգեկան այդ վեհ կեանքը ապրող Եւրոպան ազատեց բալկանեան ազգերին սուլթանների լծից. իսկ 80-ական թուականներից սկսած եւրոպական ազգերը՝ տարված կեանքի նիւթական գռեհիկ պէտքերից, նոր շուկաներ և երկիրներ նուաճելու, մէկ խօսքով՝ ենթակայ գործնականութեան շրջանի հոգեբանութեան, ոչ միայն մոռացան նոյնչափ և գուցէ աւելի հեծեծող ու ջարդվող հայերին, մակեդոնացիներին, կրետացիներին և այլն, այլ և իրանց դիւանագիտական և առևտրական մրցութեամբ աւելի ևս դժուարացրին Թիւրքիայում հալածվող քրիստոնեաների դրութիւնը։

Սակայն, իր լայն գծերի մէջ իրականութիւնը այնչափ էլ յուսահատական չէ. ընդհակառակն նա մեզ ներշնչում է նոր հաւատք, երբ արդէն անցել է «գործնականութեան» նոպան, և աւելի առողջ ու մաքուր տրամադրութիւն է սկսել վերերևալ։ Համաեւրոպական պատերազմի սկզբնաւորութեամբ՝ բովանդակ աշխարհը բաբախում է նոր կեանքով և արդէն վերածնվող «խանդավառութեան» շրջանը սկսում է արտայայտվել զանազան ուղղութիւններով։ Ներկայիս վեհ խանդավառութեան շրջանից առաւելապէս կօգտվենք և մենք հայերս։

Իբրև հետևանք 77—78-ի ռուս-թիւրքական պատերազմին՝ բալկանեան սլաւոնները ստացան ազատութիւն մէկ կամ միւս ձևով. Ռուսաստանը ստացաւ Բեսարաբիան և Ռուսահայաստանի մի մասը. Անգլիան ստացաւ Կիպրոսը, Աւստրօ-Ունգարիան՝ Բոսնիա-Հերցեգովինան և այլն, շահագրգռվող գլխաւոր պետութիւնների առաջացրած մի քաղաքական հաւասարակշռութիւն, որ գէթ մի սերնդի համար Եւրոպային տալիս էր խաղաղութիւն և կայունութիւն։ Ուրեմն Եւրոպայի բնական ոյժերը, կաշկանդված՝ հաւասար և համազօր պետութիւնների ընդհարումի սարսափից, սկսեցին առաջանալ նուազագոյն դիմադրութեան գծով՝ դէպի անդրծովեան երկրամասերը։ Ռուսաստանը առաջանում էր դէպի Կենտրոնական Ասիա, Ֆրանսիան՝ դէպի Թունիս և Սահարայի անապատները, Անգլիան՝ դէպի Եգիպտոս և Կենտրոնական Աֆրիկա, և մնացեալները ըստ կարգին։ Դարձեալ 80-ական թուականներին՝ շոգենաւեր և շոգեշարժ մեքենականութիւնը աւելի և աւելի կատարելագործվում էին. էլեքտրականութիւնը մտնում էր ասպարէզը իբրև մի նոր հսկայական ոյժ. բժշկական գիտութեան զարգացումը հովանաւորում էր եւրոպացուն հասարակածային թունաւոր մժեղների և հիւանդութիւնների դէմ. իսկ բազմահարուածեան թնդանօթների և հրացանների գիւտը սպիտակ մարդուն տալիս էր անհաւասար զէնք՝ նուաճելու համար վայրենի ժողովուրդներին։

Տնտեսագիտական աշխարհումն էլ՝ հոսանքը ընթանում էր հակամարդկայնական ուղղութեամբ։ Սրանում նախանշանը տուեց Գերմանիան, երբ 1879 թ. Բիսմարկը և րէյխստագը լքեցին ազատ վաճառականութեան դատը և որդեգրեցին մի նեղ առևտրական նացիօնալիզմ։ Նրանք անց կացրին պաշտպանողական մի բարձր տարիֆ, որ հիմնապէս հարուածում էր դրացի երկիրների արդիւնաբերութիւնը։ Ֆրանսիան, Ռուսաստանը և միւս դրացիները հարկադրվեցին հետևել միևնոյն ուղեգծին։

Թւելով ազդակներից միմիայն մի քանիսը, իմ նպատակն է, ի հարկէ, պարզաբանել այն քայլերը, որոնցով Եւրոպան 1876—78 թւերի խանդավառութեան նոպայից անցնում էր դէպի առևտրական եսասիրութիւնը։ Եւ իբրև միջանկեալ մի հատուած՝ վերոյիշեալ խորհրդածութիւնները թւելուց յետոյ, ես անցնում եմ եգիպտական հարցին և արևելեան հարցի հետ նրա ունեցած առնչութեան։ Արշակ Սաֆրաստեան

Լոնդոն

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
9 փետրվ.

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռազմական գործողութիւնները Բօբրի և Նարէվի աջ ափերում դեռ առանձին կռիւների բնոյթ ունեն. Փոքր ճակատամարտ տեղի ունեցաւ Գրօդնա-Լիպսկ ճանապարհի վրա, ուր մեր զօրքերը յարձակում գործեցին գերմանացիների վրա։

Օսովեցի շրջանում տեղի ունեցած կռիւներում եռանդուն մասնակցութիւն ունեցան բերդային թնդանօթները։

Լոմժայի մօտ յամառ կռւից յետոյ մեր զօրքերը տիրացան Էդվաբնօյին։

Պրասնիշի շրջանում թշնամին առաջ էր գալիս մեծաքանակ ոյժերով։ Ռացիոնժի և Պլօնսկի միջև մեր զօրքերը կռիւներով գրաւեցին մի քանի գիւղեր և գերեցին մօտ 500 գերմանացու։

Վիսլայի ձախ ափում մենք վանեցինք թշնամու յարձակումը Պիլիցա գետի հիւսիսային ափում և Լօպուշնօյի շրջանում։

Արևմտեան Գալիցիայում թշնամին ուժեղ թնդանօթաձգութիւն սկսեց։ Պարզվեց, որ Զակլիչինից դէպի հիւսիս աւստրիացիք փետրվ. 4-ին գործած յարձակումների ժամանակ խոշոր կորուստներ են ունեցել։

Կարպատներում մեր զօրքերը, տիրելով Սմօլնիկի մօտ մի բարձունքի, վանեցին թշնամու կրկնակի յարձակումները։ Հակառակորդն այստեղ մօտեցաւ 50 քայլ մեր դիրքերին և ամեն անգամ ստիպված էր ետ քաշվել խոշոր կորուստներով մեր կրակի տակ։ Կօզօվկի մօտ եղած բարձունքը գերմանացիք լոյս փ. 7-ի գիշերը նորից յարձակման ենթարկեցին 4 անգամ։

Վիշկօվի շրջանում մենք գրաւեցինք մի կարևոր բարձունք։

Արևելեան Գալիցիայում, Ստանիսլավօվից դէպի հարաւ-արևելք, Կրասնէ-Նեբիլօվ-Պերեխինսկօ շրջանում մենք յարձակվեցինք աւստրիացիների վրա և, յամառ սւինային կռւից յետոյ, վանեցինք նրանց երկու գումարտակը, որից յետոյ վանեցինք թշնամու մեծաթիւ ոյժերի հակայարձակումները։ Այստեղ մենք բռնեցինք մօտ 1500 աւստրիացի գերի 20 օֆիցէրի հետ և մի քանի գնդացիրով։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—«Арм. Вѣстникъ»-ում տպված են մի քանի մանրամասնութիւններ ռուս-գերմանական և ռուս-աւստրիական ռազմաճակատներում տեղի ունեցած վերջին օրերի կռիւների մասին։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 փետրվարի

ՓԱՐԻԶ.—Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն։

«Կկաած ծովի մօտից մինչև Էն գետը տեղի էր ունենում թնդանօթաձգութիւն ի նպաստ մեզ։ Շամպանում մենք փայլուն կերպով վանեցինք թշնամու հակայարձակումը, յետոյ հետապնդեցինք նրան և գրաւեցինք գերմանական բոլոր խրամատները երէկ մեր վերցրած անտառի հիւսիս-արևելեան մասում։ Մնացած զօրաճակատում տեղի էր ունենում նոյնպէս կռիւ, որի ժամանակ մենք վանեցինք թշնամու երկու հակայարձակում և առաջացանք կրկին։ Մէնիլից դէպի հիւսիս մենք վերցրինք 2 գնդացիր ու 100 գերի։ Էպարժի վրա թշնամին գործեց եօթերորդ հակայարձակումը, բայց այդ հակայարձակումը ևս անաջող անցաւ։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 փետրվարի

ԼՕՆԴՕՆ.—«Պոտարօ», «Գայլանդրէ», «Հէմիսֆէր» շոգենաւերը և երկու առագաստանաւ ջրասուզվել են Ատլանտիկ ծովում «Կարլս-Րուէ» յածանաւի ձեռքով։ 192 նաւաստին և 50 ճանապարհորդներն ազատվել են։

Երէկ ջրասուզվել է նաև նորվէգիական «Սեմանկա» առագաստանաւը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Պետական պալատմենտը Բրէմէնի հիւպատոսից տեղեկութիւն ստացաւ, որ ամերիկեան «Էվէլին» շոգենաւը ջրասուզվել է Բօրկումի մօտ։ Բրայանը Բեռլինի ամերիկեան դեսպանից պահանջեց նոր մանրամասնութիւններ։

ՀՌՕՄ.—Վալէտից հեռագրում են, որ երէկ աւստրիական երեք ականնաւ մօտեցան Անտիվարիին, որի մէջ գտնվում էին իտալական երկու առագաստանաւ։ Որպէսզի ազատեն նաւաստիներին, նաւապետները, բարձրացնելով իտալական դրօշակ, սկսեցին ափ իջեցնել նրանց։ Ականնաւերը կրակ բացին ափ իջնող նաւաստիների վրա։ Ոչ ոք չը վնասվեց. առագաստանաւերից մէկը վնասվեց, միւսը վերադարձաւ Բարլէտ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
7 փետրվարի

ՓԱՐԻԶ.— 1914 թւի ներմուծումը հաւասարվեց 6349 միլիօնի հանդէպ 1913 թ. 8421 միլիօնի։ Արտահանութիւնը 4824 միլիօն է հանդէպ 8802 միլիօնի։

ՏՕԿԻՕ.— Կառավարութիւնը քննում է գերմանական պատերազմական գերիներին աշխատեցնելու հարցը։

Եապօնական լրագիրները ամբողջովին տպել են արտաքին գործերի մինիստր Սազօնովի և Պետական Դումայի նախագահ Ռօձեանկօյի ճառերը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Կառավարիչ սենատի 1-ին և վճռաբեկ դեպարտամենտի ընդհանուր ժողովում քննվեց այն հարցը, թէ արդեօք իրաւունք ունե՞ն Ռուսաստանի դէմ պատերազմող մեծ պետութիւնների ռուսաբնակ հպատակները իրանց ստացուածքային շահերը դատարանով պաշտպանելու թէ ոչ։ Ներկայ էին աւելի քան 100 սենատօր, որոնցից ձայն ունէին 89-ը։ Նիստի սկզբում հարց յարուցվեց այն մասին, թէ պէտք է, արդեօք, ներկայ գործը անցնի օրէնսդրական ճանապարհով թէ սենատական մեկնաբանութեան կարգով. 62 ձայնով հարցը լուծվեց այն մտքով, որ գործը պէտք է ենթարկել սենատի քննութեան։ Հարցը ըստ էութեան քննելիս սենատը մեծամասնութեամբ՝ 56 ձայնով ընդդէմ 32-ի՝ վճռեց այն բացասական մտքով։

ՄՕՍԿՎԱ.—Համաքէմստվային միութիւնը առաջապահ դիրքերում բաղնիքներ հիմնելու համար յատկացրեց 400,000 ռուբլի։

ՍՕՖԻԱ.—Եկաւ գեներալ Պօն և կայարանում դիմաւորվեց Ֆէրդինանդ արքայի գեներալ-ադիւտանտից և կառավարութեան ներկայացուցչից։

ՖՐԱՆՍ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՒ ԱՆԳԼ. ԹԱԳԱՒՈՐԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
7 փետրվարի

ԼՕՆԴՕՆ.—Պարլամենտական գրքոյկում հրատարակված է այն նամակների բնագիրը, որ փոխանակեցին ֆրանսիական հանրապետութեան նախագահը և թագաւոր Գէօրգ V-ը։

Պուանկարէի նամակը գրված է Պարիզից, 18 յուլիսի, 1914 թւի։

Նրա բովանդակութիւնը հետևեալն է.

«Սիրելի և մեծ բարեկամ։ Այն լուրջ հանգամանքներում, որի մէջ գտնվում է ամբողջ Եւրոպան, ես իմ պարտականութիւնն եմ համարում յայտնել ձերդ մեծութեան այն տեղեկութիւնները, որ ստացել է ֆրանսիական կառավարութիւնը Գերմանիայից։ Ռազմի պատրաստութիւնները, որոնցով զբաղված է կայսերական կառավարութիւնը, մանաւանդ ֆրանսիական սահմանի մօտ, ստանում են աւելի ու աւելի ինտենսիվ ու շտապ բնոյթ։ Ֆրանսիան, որ վճռել է իրանից կախված բոլոր միջոցները գործադրել խաղաղութիւնը պաշտպանելու համար, մինչև այժմ բաւականացաւ անհամեմատ անհրաժեշտ նախազգուշական միջոցներով, բայց, թւում է, նրա խելացիութիւնն ու չափաւորութիւնը հազիւ թէ կանգնեցնեն Գերմանիայի ձեռնարկած միջոցները, ուստի և հիմք կայ կարծելու, որ, չը նայած հանրապետութեան կառավարութեան իմաստութեանը ու հասարակական կարծիքի հանգստութեանը, մենք կանգնած ենք ամենաահեղ դէպքերի շեմքին։

«Մեր ստացած բոլոր տեղեկութիւններից երևում է, որ եթէ Գերմանիան հաւատացած լինի, թէ բրիտանական կառավարութիւնը չի մասնակցի միջադէպին, այն դէպքում պատերազմը կը բռնկվի անխուսափելիօրէն և, ընդհակառակն, եթէ Գերմանիան հաւատացած լինի, որ սրտագին համաձայնութիւնը, եթէ այդ պահանջեն հանգամանքները, կարտայայտվի իբր ամբողջ ոյժով անգամ կռւի դաշտում, ուստի լուրջ հիմունք կը լինի ենթադրելու, որ հաշտութիւնը չի խախտվի։ Կասկած չը կայ, որ մեր ծովային զինուորական համաձայնութիւնները լիակատար ազատութիւն են տալիս ձեր մեծութեան կառավարութեանը և որ 1912 թ. սըր Գրէյի և պ. Կամբօնի փոխանակած նամակներում Անգլիան և Ֆրանսիան միայն փոխադարձաբար են պարտաւորվել հայեացքներ փոխանակելու, եթէ Եւրոպայում իրերի ընդհանուր դրութիւնը ստանայ լարված բնոյթ, և միասին քննելու՝ թէ անհրաժե՞շտ է, արդեօք, հանդէս գալ միասին։ Սակայն այն մտերմութիւնը, որ երկու երկիրների հասարակական կարծիքը տուել է անգլօ-ֆրանսիական համաձայնութեանը, այն հաւատը, որով երկու կառավարութիւնները անդադրում աշխատում են յօգուտ խաղաղութեան պահպանման, ինձ իրաւունք են տալիս հաղորդել ձեզ միանգամայն բացարձակ իմ տպաւորութիւնները, որոնք միանգամայն համակերպում են հանրապետութեան կառավարութեան գիտակցութեանը և համայն Ֆրանսիայի տրամադրութեանը։

«Եւ ահա, այսուհետև ես կարծում եմ, որ միայն բրիտանական կառավարութեան գործելակերպից և յայտարարութեան տոնից կախված է վերջ ի վերջոյ միջադէպի խաղաղ լուծման հնարաւորութիւնը։ Մենք ճգնաժամի հենց սկզբից խորհուրդ էինք տալիս մեր դաշնակիցներին լինել չափաւոր և նրանք զանց չէին առնում այդ խորհուրդները։

«Թագաւորական կառավարութեան հետ համամտվելով ու յենվելով սըր Էդուարդ Գրէյի վերջին խորհուրդներին, մենք շարունակում ենք գործել միևնոյն ուղղութեամբ. բայց եթէ հաշտվելու բոլոր ջանքերը միայն մի կողմից են, եթէ Գերմանիան և Աւստրիան կարող են յուսալ թէ Անգլիան ձեռնպահ կը մնայ միասին հանդէս գալուց և եթէ Աւստրիան յամառէ իր պահանջներում, այն դէպքում նրա և Ռուսաստանի միջև անհնարին կը լինի համաձայնութիւն կայացնել։ Ես խորապէս համոզված եմ, որ որքան աւելի Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը կը տան ներկայ րոպէին ապացոյցներ իրանց դիւանագիտական քայլերի միաբանութեան նկատմամբ, այնքան աւելի հիմք կը լինի յուսալ, թէ խաղաղութիւնը կը պահպանվի։

«Թող ձեր մեծութիւնը ներէ իմ այս նամակիս համար, որի նպատակն է տեսնել եւրոպական հաւասարակշռութիւնը վերջնականապէս հաստատված։ Ես խնդրում եմ ձեր մեծութիւնից հաւատալ իմ ամենասրտագին զգացմունքներին։ Պուանկարէ»։

Գէօրգ թագաւորը պատասխանեց մի նամակով, գրված 19 յուլիսի, 1914 թ.։

Նրա բովանդակութիւնը հետևեալն է.

«Սիրելի և մեծ բարեկամ։ Ես շատ բարձր եմ գնահատում այն զգացմունքները, որոնք դրդեցին ձեզ գրել ինձ նամակ այնպիսի սրտագին ու բարեկամական ոգով։ Ես շատ երախտապարտ եմ ձեզ ձեր այնքան բացարձակ յայտարարութեան համար։

«Դուք կարող էք հաւատացած լինել, որ Եւրոպայի արդի կացութիւնը հանդիսանում է ինձ համար մեծ անհանգստութեան ու լարված ուշադրութեան պատճառ։ Ես բաղդաւոր եմ այն մտքից, թէ մեր երկու կառավարութիւնները այնպէս բարեկամաբար են գործում միասին ներկայումս հասունացած հարցերի խաղաղ լուծման վերաբերմամբ։ Ինձ համար իսկական բաւականութիւն կը լինի, եթէ մեր միացեալ ջանքերը պսակվեն աջողութեամբ. ես չեմ կորցնում իմ յոյսը, որ ցնցող դէպքերը, որոնք այնպէս մօտալուտ են թւում, կը վերացվեն։

«Ես հիացած եմ այն սառնասրտութիւնից, որ երևան էք հանում դուք և ձեր կառավարութիւնը, խուսափելով ձեռք առնել ձեր սահմաններում արտակարգ ռազմի միջոցներ և այնպիսի դիրք բռնելով, որ աւելի սակաւ կը մեկնվէր իբրև մարտահրաւէր։

«Ես Ռուսական կայսրի և գերմանական կայսրի հետ անձամբ բանակցելով ամեն ջանք գործ եմ դնում, որպէսզի գտնենք որևէ ելակէտ, որպիսին յամենայն դէպս յետաձգէ պատերազմական գործողութիւնները սկսելը, որպէսզի մեծ պետութիւնները ժամանակ ունենան հանգստօրէն քննել իրար միջև իրերի ստեղծված կացութիւնը։ Ես մտադիր եմ անընդհատ շարունակել այս ջանքերը, մինչև որ յոյս կերևայ՝ թէ միջադէպը կը լուծվի խաղաղ ճանապարհով։

«Ինչ վերաբերում է այն դրութեան, որ կը բռնէ իմ երկիրը, դէպքերը այն աստիճան արագ են փոխվում, որ դժուար է նախատեսել թէ ինչ կը պատահի։ Բայց դուք կարող էք հաւատացած լինել, որ իմ կառավարութիւնը կը շարունակէ ազատօրէն ու բացէ ի բաց քննել պ. Կամբօնի հետ՝ բոլոր այն հարցերը, որոնք կարող են հետաքրքրել երկու ազգերին։ Գէօրգ թագաւոր և կայսր»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
9 փետրվարի

ՈՒՐԳԱ.—Վախճանվեց արտաքին գործերի մինիստր իշխան Ցինվան-խան Դաղօրժին։

ՕԴԵՍՍԱ. — Բացվեցին գինեգործութեան ժամանակաւոր բարձր դասընթացքներ բարձրագոյն կրթութիւն ունեցող անձանց համար։

ՏՕԿԻՕ.—Նկատվում է մեծ յուզմունք եապօնաբնակ չին ուսանողների մէջ։ Մօտ 500 ուսանող մեկնեցին Չինաստան. նրանցից շատերին Գերմանիան գործիք է դարձրել՝ Չինաստանում հակաեապօնական պրօպագանդա կազմակերպելու համար։

ԲՕՐԴՕ.—Սարա Բէռնարի ոտը անդամահատեցին։ Հիւանդի առողջական դրութիւնը բաւարար է։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը թոյլատրեց, որպէս զի անդրկովկասեան շիա հոգևորականութեան վարչութեան անդամ ախունդ Մահմէդ Ախունդ-զադէն նշանակվի անդրկովկասեան շէյխ-ուլ-իսլամ։

ՕԴԵՍՍԱ.—Մագիստրոս Բօրզէնկօն 120,000 ռուբլի կտակեց համալսարանին՝ իր անունով ներքին հիւանդութիւնների կլինիկա հիմնելու համար։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Գերմանիայի և Ամերիկայի յարաբերութիւնները շատ լարվել են։ Եթէ Գերմանիան չը կատարէ Միացեալ Պետութիւնների բոլոր պահանջները, զինված ընդհարումը անխուսափելի է։

◆ Վիլհէլմ կայսրը ներկայումս գտնվում է Հէլգօլանդ կղզում և անձամբ ղեկավարում է ծովային պաշարման գործողութիւնները։

◆ Մօսկվայում փետրվ. 9-ին լոյս տեսած միօրեայ լրագրի վաճառումը, նախնական տեղեկութեան համաձայն, տուել է մօտ 100,000 ռուբլի արդիւնք։

◆ Ալբանների հրոսակախմբերը վերջնականապէս պարտվել են Սերբիայում։

◆ Ռուս-գերմանական ռազմադաշտում հեղինակաւոր ռազմագէտների կարծիքով շուտով սկսվելու են շատ խոշոր կռիւներ, որոնք տևելու են երկար։

◆ Բեռլինում գետնախնձորի սակաւութեան պատճառով անկարգութիւններ են։

◆ Գերմանացիք նոր օդային յարձակում են պատրաստում Անգլիայի դէմ։

---

*) Տես «Մշակ» № 29.

◆ Արևմտեան ռազմադաշտում գերմանացիք սկսելու են վճռական գործողութիւններ։

◆ Պարիզի թերթերին հեռագրել են, որ մթերքների պակասութեան պատճառով գերմանական կառավարութիւնը առաջարկել է 5 միլիօն ունևոր մարդկանց՝ ճանապարհորդութեան ձեռնարկել այլ երկիրներ։

◆ Պետրօկովից գերմանացիք բոլորովին հեռացել են։

◆ Կիէվում ապրիլի 1-ին փակվելու են բոլոր գերմանական և աւստրիական ակցիօներական ու առևտրական ձեռնարկութիւնները։

◆ Վարշավայից հեռագրում են «Р. С.»-ին, որ վերջերս մեծ թւով մարդիկ են մտնում քաղաք։

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԸ ՄԱՐՍԷՅԼՈՒՄ

Մարսէյլի հայ կամաւորների պատուիրակ Արամ Թիւրապեանը, որ վերջերս մի գրութեամբ առաջարկել էր Պարիզի ռուսաց դեսպանատան զինուորական կցորդ գնդապետ Օգնօբիշինին հարիւր հայ կամաւոր՝ կցելով իր գրութեանը կամաւորների անուանացուցակը, վերջերս ի պատասխան իր այդ առաջարկի ստացել է հետևեալ գրութիւնը Մարսէյլի ռուսական ընդհ. հիւպատոսից.

«Բորդօյի ռուսական պ. դեսպանի հրամանով՝ պատիւ ունիմ ձեզ յայտնելու Նորին գերազանցութեան ջերմագին շնորհակալիքը այն համակրական զգացումների առիթով, որ արտայայտել էիք ռուսական զինուորական կցորդ գնդապետ Օգնօբիշինին ուղղած ձեր նամակում։

«Պ. դեսպանը միաժամանակ յանձնարարել է ինձ յայտնել ձեզ, որ ռուսական պետութեան կանոնները հակառակ լինելով կամաւորների խմբի մասնակցութեանը պատերազմին, կայսերական դեսպանութիւնը չը պիտի կարողանայ պաշտպանել այդ խորհուրդը, որ անշուշտ պատիւ է բերում իր հեղինակներին։

«Օգտվում եմ դէպքից ձեզ խնդրելու, պ. պատուիրակ, ընդունել իմ խորին յարգանաց հաւաստիքը»։

Ա. Թիւրապեանը յիշեալ գրութիւնը ստանալուց յետոյ՝ խորհուրդ է տուել Մարսէյլում գտնված յիշեալ կամաւորներին, որ ով հնար ունի իր անձնական ծախսով հասնել Հայաստան՝ միանալու հայ կամաւորներին Կովկասում, այդպիսին կարող է մեկնել Դէդէաղաչ ցնոր կարգադրութիւն. իսկ այն կամաւորները, որոնք ոչ մի հնարաւորութիւն չունեն միանալու իրանց մայր-հայրենիքի կամաւորներին, կարող են զինւորագրվել ֆրանսիական օտար լեգէօնին։

(«Le Soleil du Midi»)

ՀԵՆՐԻԽ ՍԵՆԿԵՎԻՉԻ ԿՈՉԸ

Շվէյցարիայում կազմված, պատերազմից վնասվածներին օգնող գլխաւոր կոմիտէտի անունից նշանաւոր լեհ գրող Հ. Սենկեվիչը մի կրակոտ կոչ է ուղղել քաղաքակիրթ ժողովուրդներին լեհաց օգնելու մասին։

«Մարդկութեան պատմութեան մէջ ամենամեծ պատերազմը և զարհուրելի աւերածութիւնը—ահա այն երկու չար ոգիները, որոնք տիրում են այսօր աշխարհին։ Հազարաւոր զինուորներ են ոչնչանում գնդակ ու սուիններից, իսկ միլիօնաւոր անզէն մարդիկ՝ կարիքից ու սովից։

«Երկու երկիրներ են դարձել արիւնոտ կռիւների ասպարէզ. երկիրներ, որոնք երբեմն առատաձեռն կերակրիչ են եղել նրանց մէջ ապրող ժողովուրդների համար, իսկ այժմ խուլ անապատ են դարձել։

«Դա Լեհաստանն ու Բէլգիան են։

«Բայց ամբողջ աշխարհը արդէն օգնութիւն հասցրեց Բէլգիային։ Այժմ իմ հայրենիքն էլ է հայցում այդ օգնութիւնը։ Լեհական հողը, շատ աւելի ուժեղ, քան հերոս Ալբերտի թագաւորութիւնը, ոտնահարված է երկաթէ կրունկով։ Սուրը արեան վտակներ է թափել այդ ապաբաղդ երկրում, որովհետև նրա զաւակները հարկադրված են կռւելու երեք թշնամական բանակներում։

«Քաղաքներ ու գիւղեր են ոչնչացված հրդեհից։ Ժողովրդական աշխատանքը կանգ է առել և Նեմանից մինչև Կարպատները փռվող ահագին երկրի վրա սովի սև ուրուականն է տարածել իր թևերը։

«Բանւորը չէ աշխատում, որովհետև ֆաբրիկաներ չը կան արդէն Լեհաստանում. ընկած գութանները ժանգոտում են, որովհետև գիւղացուց վերցրել են նրա անասունն ու սերմացուն. քաղաքների մեծ մասում առևտրականը ապրանք չէ ծախում այլևս, որովհետև նա միջոց չունի ապրանք գնելու։

«Ծերունիներն ու կանայք անապաստան են մնացել դաժան ձմրանը։ Հիւանդութիւններ են տարածվել, օջախների կրակները մարել են, իսկ երբ մանուկները վտիտ ձեռքերը պարզում են իրանց մայրերին և մի կտոր հաց աղերսում, մայրերը միայն արցունքներով են պատասխանում նրանց։ Եւ այսպիսի ծայրայեղ քաղցածութեան հասած, օգնութիւն աղաղակող մարդիկ — լսեցէք, քրիստոնեայ ժողովուրդներ!—միլիօններ և միլիօններ են։

«Արդեօք իրաւունք ունի Լեհաստանը ձեր օգնութեանը։

«Օգնութեան իրաւունք ամէն ժողովուրդ ունի յանուն սիրոյ և արդարութեան։

«Այդ իրաւունքն ունի և Լեհաստանը հէնց իր պատմական դրութեամբ, որովհետև երկար դարեր նա քրիստոնէութեան բերդապատն է եղել կիսալուսնի դէմ մղված կռւի մէջ, եղել է վահան քաղաքակրթութեան, որ պաշտպանել է ճնշվածներին։

«Սոբեսկիի և Կոստիւշկօյի անունները խորապէս արմատացել են ժողովրդեան յիշողութեան մէջ։

«Մեր հայրենիքի դռները միշտ բաց են եղել հալածանքի զոհերի համար։ Որտեղ էլ որ մղվել է ազատութեան կռիւը, այնտեղ թափվել է լեհական արիւնը. որտեղ էլ որ կարիքը հարուածել է մէկին, այնտեղ էլ ուղարկվել է մեր գրօշը։ Կուլտուրական ժողովուրդների ընդհանուր հանդիսաւոր հիմնի մէջ երբէք չէ բացակայել մեր ձայնը, որ միշտ հնչել է ազնուօրէն։

«Համաշխարհային քաղաքակրթութեան մէջ երբէք չեն սպառվել մեր անունները, մեր աշխատանքը, մեր միտքը և մեր ստեղծագործական ուժերը։

«Ահա յանուն այդ մասնակցութեան, որ մենք ունեցել ենք ժողովուրդների կեանքում, յանուն այն իրաւունքների, որ տալիս է այդ մասնակցութիւնը, յանուն Քրիստոսի վարդապետութեան, յանուն անցեալ և ներկայ տանջանքների՝ դիմում եմ ձեզ, քաղաքակիրթ ժողովուրդներ, և կոչում եմ օգնութիւն անել իմ հայրենակիցներին։ Թող աւերակների և մոխրի տակից ելնեն լեհական քաղաքներն ու գիւղերը. թող գիւղացու ուժերը չը սպառվեն գութանը բարձրացնելու համար. թող հատիկը չը հատնի դաշտերը ցանելու համար. թող լեհական սրտում իմանայ այլ զգացմունքներ, բացի ցաւից, լեհական ձայնը դադարի միայն հառաչանք լինելուց. թող լեհ մայրերը մանուկներին գոնէ մի բան տան արտասուքների փոխարէն։

«Հաց և օթեան լեհ ժողովրդին, որպէս զի նա կարողանայ ապրել մինչև վերածնութեան գարունը»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

Բաթումի Ախալցխէն գիւղի նուիրատուների

(Օգնութ. հայ գաղթականների)

(Տես «Մշակ» № 14)

Ա. Սրապեան 2 ր., Օ. Սրապեան, Վ. Խաչօյեան, Ա. Մալխասեան, տ. Ա. Աշճեան, Յ. Յակոբեան, Թ. Կակօսեան, Ա. Ռահանեան, Ա. Ներսէսեան, Ս. Մարգարեան և Ե. Վարդիկեան 1-ական ր., Մ. Աշճեան, Գ. Ասլանիդի, Մ. Կարապետեան, Գ. Իշխանով, Պ. Բարեխղարիդի, Վ. Ռահանեան, Ա. Պամբուրեան, Մ. Թօրոսեան, Հ. Պաշին-օղլի, Ս. Ինճէարապեան, Դ. Սավուլիդի, Ա. Թօդօրաձէ, Ա. Գարամանեան, Ն. Գրումիդի, Յ. Մալխասեան, Յ. Քարամանեան, Ս. Քարամանեան և Անդրօնիկ՝ 50-ական կ., Խ. Մաղմանիդի և Գ. Գարաեանիդի 30-ական կ., Մ. Թումանեան, Գ. Ապալարեան, Ա. Սավուլիդի, Խ. Սավուլիդի և Դ. Սաեֆանիդի 20-ական կոպէկ։ Ընդամենը 22 ր. 60 կոպէկ։

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս յայտնի է, Հայ Նպաստամատոյց Ընկերութեան ընդհանուր ժողովը որոշեց խնդրել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանաւորութիւնը։ Ընդհանուր ժողովի այդ որոշումը յայտնված լինելով Նորին Վեհափառութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղարկել է Ընկերութեան նախագահ Դանիէլ-խան Աւան-Իւզբաշեանի անունով հետևեալ հեռագիրը.

Էջմիածին, 8 փետրվարի

Հայ Նպաստամատոյց Ընկերութեան ընդհանուր ժողովի որոշման համաձայն, ընդունում եմ Ընկերութիւնը Իմ հովանաւորութեան ներքոյ, օրհնում եմ ձեզ և Ընկերութեան բոլոր անդամներին, ցանկանալով աջողութիւն հայ փախստականներին օգնութիւն մատակարարելու գործի մէջ։

Գէորգ V Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԳՆԵՐԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

I

Մի երևոյթ այսօր ընդհանուր մտահոգութեան առարկայ է. կեանքի թանգութիւնը։

Օր ըստ օրէ թանգանում են մեր սնունդի ամենաանհրաժեշտ մթերքները՝ հացը, միսը, շաքարը և այլն։

Թանգանում է ուսումը, հագնելիքը, վառելիքը, բնակարանը և առհասարակ ապրուստն ամբողջապէս։

Մտահոգութիւնը փոխվում է տրտունջների՝ ընդդէմ առևտրականների և, գլխաւորապէս, քաղաքային ինքնավարութեան, որը արմատական միջոցներ ձեռք չէ առնում դրա առաջն առնելու համար։

Իսկ ինքը՝ տրտունջները յայտնող մասսան կամ հասարակութիւնը գործնական ոչ մի քայլ չէ անում այդ ուղղութեամբ։

Մինչդեռ կարող է հօ կօօպերատիվ հիմունքներով պահեստներ հիմնել՝ եղած սպառողական ընկերութիւններին զարկ տալ, անդամագրվելով և այլն։

Սակայն մի րօպէ զսպենք մեր տրտունջներն ու չափազանցրած մեղադրանքները և նայենք երևոյթին բաց աչքերով։

Մի՞թէ թանգութեան տենդենցը նկատվում է այսօր կամ նոյնիսկ երէկ միայն։

Եթէ դա լինէր այսօր, պատերազմի շրջանում, անշուշտ կը համարէինք նրան իբրև մի անցողական երևոյթ, որը երևան գալով պատերազմի հետ՝ պատերազմի հետ էլ դատապարտված է չքանալու։

Դժբաղդաբար նկատվող թանգութիւնը քրօնիկական է մի շարք տարիներից ի վեր. մթերքների և առհասարակ ապրանքների գները բարձրանում են սիստեմատիկաբար տարէ-ցտարի, ու այն էլ ոչ միայն մեզանում, այլ և Եւրօպայում ու բոլոր երկիրներում. մի տեղ աւելի, մի ուրիշ տեղ պակաս չափով։

Գների հետզհետէ բարձրանալուն մենք արդէն ընտելացել ենք որոշ չափով և միմիայն ժամանակաւոր ուժեղ բեկբեկումները կամ պակասութիւնը զգալի են դարձնում նրանց թանգանալը մեզ համար։

Եթէ մթերքների գները բարձրանալու երևոյթի այդ տենդենցը 10 կամ 15 տարվայ ընթացքում արտայայտենք թւական տուեալներով և համեմատութեան համար դնենք կողք-կողքի, կապշենք տեղի ունեցած փոփոխութեամբ։

Գների կատարեալ յեղափոխութիւն կը նկատենք այնտեղ։

Եւ թանգանալու տենդենցի այդպիսի պատկերաւոր, ցայտուն արտայայտութիւնը կը ստիպի վերջապէս ոչ միայն հասարակական հաստատութիւններին, ոչ միայն պետութեանը, այլև ժողովրդի մէջ գործող բանիմաց ոյժերին ուսումնասիրութեան նիւթ դարձնելու քրօնիկական երևոյթը և միջոցներ որոնելու նրա դէմ։

Մանաւանդ որ երևոյթը, ինչպէս նկատեցի, համաշխարհային բնոյթ ունի։ Եւրօպական մի քանի մեծ պետութիւնների մէջ արդէն զբաղվում են այդ հարցով։

Առաջինը, ինչպէս և պէտք էր սպասել, կանգ առաւ այդ երևոյթի վրա Անգլիան։ Այնտեղ պատերազմը սկսվելուց դեռ երկու տարի առաջ լոյս տեսաւ պաշտօնական տեղեկագիր—Կապոյտ Գիրքը—որից կեանքի թանգութեան մասին *) երևում է, որ 1909 թւից մինչև 1912 թիւը առաջին անհրաժեշտութեան մթերքների գները ընդհանուր առմամբ բարձրացել են 4,6%-ով, իսկ 1900 թւից հաշւելով նոյնիսկ 10%-ով։ Վրա հասաւ պատերազմը. բնականաբար գների բարձրանալու տենդենցը պէտք է էլ աւելի ցայտուն դառնար։ Եւ իրաւ. պաշտօնական տեղեկութիւնները շտապում են վկայելու, որ պատերազմը սկսվելուց մինչև այժմ առաջին անհրաժեշտութեան մթերքների գները Անգլիայի մեծ քաղաքներում բարձրացել են 19%-ով, իսկ գաւառներում 17%-ով։ Ամենից աւելի բարձրացել են շաքարի (62%), թարմ ձուերի (62%), ձկան (51%) գները։ Մասնաւորապէս մսի գինը բարձրացել է 8—32%-ով. նայելով տեսակին. հացինը՝ 18%-ով։

Գների բարձրանալը դեռ ևս շարունակվում է։

Գերմանիայի մասին աւելորդ է խօսել անգամ, քանի որ նա այսօր, շնորհիւ պատերազմի, բոլորովին առանձնացված է և անկարող է ներմուծել իրան համար անհրաժեշտ այնպիսի մթերքները, ինչպիսին է հացը, միսը, իւղը, ճարպը, վառելիքը և այլն։

Նոյն երևոյթը կայ և Ֆրանսիայում, իսկ աւելի պակաս չափով՝ նոյնպէս Իտալիայում, Սպանիայում։

Ռուսաստանը, որ Գերմանիայի, Անգլիայի և այլ երկիրների շուկաների գլխաւոր մատակարարողն է, արտահանում է մեծ մասամբ հաց ու միս պէտք էր սպասել, որ այդ կողմից փոքր ինչ նպաստաւոր դրութեան մէջ կը լինէր, քան ի հաշիւ օտարերկրեայ հացի ու մսի ապրող Անգլիան ու Գերմանիան շնորհիւ ներկայ պատերազմի, զրկվելով սև-ծովեան հաղորդակցութիւնից, ուրեմն և արտահանելու հնարաւորութիւնից, պէտք է ուղղակի էժանութիւն տեսնէր նա։

Էժանութեան փոխարէն մենք տեսնում ենք դարձեալ թանգանալու միևնոյն տենդենցը։

Գները բարձրանալու քրօնիքական երևոյթը, որ կար մինչև պատերազմը սկըսվելը, շարունակվում է այսօր էլ։

Սակայն ինչ էր պատկերը պատերազմից առաջ։

Այդ պատկերը տեսնելու համար մենք ունենք մի աղբիւր միայն, որը իւրաքանչիւր տարի լոյս է ընծայում առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը։ Դա ռուսական և արտասահմանեան գլխաւոր շուկաների ապրանքների գների ժողովածուն է։ Մօտ օրերս հրատարակված է նոյնպէս 1913 թւի ժողովածուն։

Հիմնվելով նրա մէջ առաջ բերված պաշտօնական տեղեկութիւնների վրա, էկօնօմիստ Պաժիտկով**) հաստատում է, որ վերջին հարիւրամեակում նկատված թանգանալու տենդենցը շարունակվում է այսօր ևս։ Եւ եթէ Ռուսաստանում արձանագրվող բոլոր ապրանքների գների միջին չափը, մակերևոյթը, 1890—1899 տարիները ընդունենք հարիւր, այդ դէպքում նրանց յաջորդական արժէսումը կարտայայտվի հետևեալ թւանշաններով. 1900—1904 թիւը՝ 111,1, 1905—1909 թւականը՝ 125,0, 1910 թւին՝ 128,9, 1911 թւին՝ 130,9, 1912 թւին՝ 138,9 և 1913 թւին՝ 136, 6։

Այստեղից պարզ երևում է, որ համեմատաբար ամենաթանգ տարին ապրանքների գների կողմից 1912 թիւն է։ Յաջորդ տարին՝ 1913 թւին գները մի փոքր ընկնում են, բայց և այնպէս նախորդ տարիների համեմատութեամբ, 1912 թւից յետոյ, նա երկրորդ տեղն է բռնում։

Բայց որպէս զի աւելի հասկանալի ու տեսանելի լինի այդ տենդենցը և նկատելի, թէ որ տեսակի ապրանքների գներն են ամենից աւելի բարձրացել, ուրեմն և թանգացել, զետեղում ենք հետևեալ աղիւսակը.

Ապրանքների անունները	1890—900	1900—909	1910	1911	1912	1913 Թ.
Հացի մթերքներ	100	119,9	117,8,	128,01	145,7	128,9
Անասուններ	100	131,4	154,6	143,9	153,6	168,7
Իւղեղէն	100	111,1	140,7	134,1	126,8	112,6
Հանքեղէն	100	118,7	116,7	129,9	155,6	168,8
Մանածաթելեր	100	133,0	154,3	151,9	150,7	145,5
Հանածոյին ապր.	100	107,2	113,6	117,9	122,7	119,5
Նպարեղէն	100	105,4	104,8	110,4	117,1	112,4
	100	118,1	128,9	130,9	138,9	136,6

Եւ ահա դրա վրա համեմատութեան առնելով բոլոր տարիների մի շարք ապրանքների գները, մանաւորապէս 1900—1909 թւականների, տեսնում ենք, որ ամենաբարձր գները եղել են 1913 թւին, մանաւանդ երկու տեսակը՝ անասունների ու հանքեղէնների, որոնք հասնում են 168,7 և 168,8%-ի։

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանում, 90-ական թւականների հետ համեմատելով, համարեա, վերոյիշեալ բոլոր տեսակի ապրանքներն էլ թանգացել են 36,6%-ով։ Իսկ եթէ մասնաւորապէս վեր առնենք, ամենակարևոր առարկաները, ինչպիսին է հացը, անասունները, հանքեղէններն ու մանելու ապրանքները, այսինքն՝ աւելի կարճ ասելով՝ սնունդը, հագուստը և վառելիքը, կը տեսնենք, որ կեանքը 1913 թւին թանգացել է, յիշեալ շրջանի համեմատութեամբ, 50%-ով։ Ուրեմն, աւելի քան մէկ ու կէս անգամ։

Ոչ մի եւրօպական երկիր նման պայմաններում այդպիսի խիստ թանգութեան ենթակայ չէ եղել այդչափ կարճ ժամանակամիջոցում։

Եւ քանի որ շարունակվում է թանգանալու տենդենցը այժմ էլ, երբ ամենից աւելի կարելի էր սպասել հակառակը, այսինքն որ գներն ընկնէին, էժանանային, ու այդ տեղի չունեցաւ, ասել է՝ գների բարձրանալուն նպաստող նախկին ֆակտօրներին այժմս աւելացել են նորերը։

Իբրև այդպիսին կարելի է մատնանշել տուրքերի աւելացումը, փոխադրական վճարների բարձրացնելը և առհասարակ տեղափոխութեան դժուարութիւնները։

Լ. Դ.

---

*) «Р.В.», Діонео-ի յօդուածը։

**) «День» լրագրի մէջ։

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Թող կորչի անունս,
Անունի գործը չի կորչի։
Գր. Արծրունի

Ահա երկու ամիս է, ինչ Մոսկվայում հայկական գաղութի կողմից «ընտրված է» (չակերտների մէջ) Հայկական Կօմիտէ, պատերազմից վնասվածներին օգնելու համար։ Եւ ճիշդ նոյնքան ժամանակ է, ինչ նոյն կօմիտէին կից և նրա հովանաւորութեան տակ՝ կազմակերպվել է հայ կանանց կօմիտէ՝ իրանց սեփական պրեզիդիումով։

Այս երկու ամսվայ ընթացքում Մոսկվայի Հայ Կանանց կօմիտէն, օրինաւոր, գլուխը կախ արագ գործում է, և գործում է նա սուս ու փուս առանց որևէ աղմուկի։

Ուզենալով աւելի դրական և փաստացի տեղեկութիւններ ունենալ ձեռքիս տակին, ես պատիւ ունեցայ տեսնվել Հայ Կօմիտէի նախագահ տ. Նունէ Ն. Մելիք-Բէգլարեանի հետ, որը ինձ վրա միանգամայն համեստ գործունեայ մարդու քաղցր տպաւորութիւնը թողեց։

Եւ նրանք գործել են ահա այս կերպով՝

1) Բալիեվի «Летучая мышь» թատրօնում կազմակերպել են մի ներկայացում, որը իբրև զուտ արդիւնք տուել է 4100 րուբլի։

2) Դեկտեմբերի 19-ին, 20-ին և 21-ին «Благородное собраніе»-ում Զեմստվոների Միութեան կազմակերպած բարեգործական վաճառքում հիմնել են «Հայկական անկիւն», որտեղ վաճառքից ստացվել է 4700 րուբլի։

3) Դասախօսութիւններ են կազմակերպել, որից Ջիվիլեգեանի դասախօսութիւնը «Հայկական հարցի» մասին տուել է մօտ 400 րուբլի։ Իսկ մեզ բոլորիս լաւ ծանօթ հնագէտ պրօֆ. Ն. Մառի երկու դասախօսութիւնները եթէ նիւթական կողմից ոչ մի եկամուտ չեն տուել, սակայն բարոյական տեսակէտից ունեցել են որոշ արժէք՝ ռուս հասարակութեանը ծանօթացնելով Հայաստանի և հայկական կուլտուրայի մասին։

4) Մի ներկայացումն էլ այս օրերս է տուել «ЗИМИНЪ»-ի օպէրային թատրօնում։ Ներկայացրել են Սումբաթովի «Դաւաճանութիւն» օպէրան, որը մեծ էնտուզիազմ է առաջ բերել հասարակութեան մէջ Մեսխի կործանումի տեսարանը, որի ժամանակ օրկէստրը նուագել է «Զէյթունցիների» մարշը։

Ներկայ եղողներից շատերը, նկատեց յարգելի տիկինը, ուղղակի արտասվում էին։

Այս ներկայացումը զուտ արդիւնք է տուել 1700 րուբլի։

Սա բաւական չէ, Հ. Կանանց Կոմիտէն տիկ. Մ. Ն. Պօպօվի ձեռներէցութեամբ տաք շորերի ժողովարարութիւնն է կազմակերպել տեղական հայ կօլօնիայի մէջ և նկատում է յարգելի տիկինը, որ այդ նուիրաբերածների մէջ ոչ մի աւելորդ իր չէ եղել, բոլորն էլ պիտանի և կարևոր իրեր։ Այդ ժողովածներից մի մասը բաժանել են այստեղ հասած փախստականներին, իսկ միւս մասը որոշ կօմպլեկտի վերածելով յունվարի 5-ին մի վագօնով ուղարկել են Թիֆլիս քաղաքագլուխ Խատիսեանի անունով։

Հայ Կանանց Կօմիտէն դրանով չորրորդ վագօնն է ուղարկում Կովկաս, ճիշդ 3000 կամաւորներին տաք հագցնելու բաւականութեամբ։

Բացի դրանից կանխիկ դրամով փոխադրել է Կարս՝ 3000 ր., Երևան՝ 4000 ր.։

Այսօր նա Կովկասի տարբեր ծայրերից ստանում է մի շարք խնդիրներ և Կանանց Կօմիտէն ծրագրելով ժողովարարութեան նոր ձևի միջոցներ՝ պատրաստում է մեծ քանակով տաք գուլպաներ և կօշիկներ ուղարկել Թիֆլիս փախստականների համար։

Այս բոլորից ի հարկէ պարզ երևում է, որ Հայ Կանանց Կօմիտէն գործունեայ մարմին է Մոսկվայում, որին չենք կարող խորին բերկրանքով չը յայտնել նրան մեր սրտագին շնորհակալութիւնը և մաղթել նրան անսպառ եռանդ և տոկունութիւն՝ սկսած ծանր գործը մինչև վերջը կրկնակի եռանդով առաջ տանելու համար։

Թող ապրեն այդպիսի ազնիւ և մաքուր հոգիները։

Մ. Աղեան

Մոսկվա

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անպարտաճանաչ իշխանութիւն

Քութայիս, 6 փետրվարի

Հոգևոր իշխանութեան զարմանալի անտարբերութիւնը դէպի Քութայիսի հայերը իր ծայրին է հասնում։

Աշոտ քահանայի մահից յետոյ՝ մինչև այժմ Քութայիսի հայերի համար դեռ քահանայ չէ նշանակված։

Մեծ պասի այս ապաշխարանքի օրերում ժողովուրդը զրկված է հոգևոր մխիթարութիւնից։

Ժողովրդի յուզմունքը մեծ է։

Շատերը յաճախում են օտար եկեղեցիներ։

Կացութիւնը ամենախայտառակ պատկեր է ներկայացնում։

Օտարների հետ հանդիպելիս՝ իսկոյն հեգնանքով հարցնում են. «Ի՞նչ է, դուք քահանայ չունիք...»։

Եթէ այս բոլորը անյայտ լինէր հոգ. իշխանութեան, դեռ կարելի էր մի կերպ հաշտվել իրողութեան հետ։ Բայց քանի-քանի գրութիւններ են գնացել Թիֆլիսի կօնսիստորիան, որքան մարդիկ են ներկայացել անձամբ, բացատրելով Քութայիսի հայերի ցաւալի դրութիւնը, խնդրելով մի քահանայի նշանակումը։ Սակայն մինչև այսօր ոչ մի գոհացումն չէ տրված խնդրին։

Բացի դրանից՝ կան նաև ուրիշ առաջնակարգ հարցեր, որոնցից ոչ մէկը դարձեալ չէ լուծված. Դպրոցական հարց, հոգաբարձական հարց, փլված պատի շինութեան հարց։ Այդ չարագուշակ պատը սպառնում է եկեղեցուն և գուցէ մի աղէտի պատճառ դառնայ... Կայ նաև զանգակատան հարց։

Դեռ շատ ժամանակ չէ, որ Թիֆլիսի առաջնորդը Քութայիսում եղած ժամանակ ինքը անձամբ իրազեկ է եղել այդ բոլորին, բայց մինչև այժմ ոչ մի կարգադրութիւն չէ եղել ոչ մի հարցի վերաբերմամբ։

Միայն մի ականաւոր կարգադրութիւն, որ եղել է Թիֆլիսից, հետևեալն է.

Նախկին վաստակաւոր երէցփոխ տեղիս պատուաւոր վաճառական Յակոբ Ալիբէկեան եկեղեցուն մատուցած այլ օգտակար ծառայութիւնների հետ՝ եկեղեցու աւելորդ գումարները շահեցնում էր վաճառականների շրջանում վաճառականական որոշ տոկոսով և այդպիսով բաւական աճեցնում էր այդ գումարները առանց որևէ ակնկալութեան և իր կատարեալ պատասխանատուութեամբ կորուստի համար, թէև մի կոպէկ կորուստ չէ եղել և եկեղեցին բաւական շահվել է։ Յակոբ Ալիբէկեան հրաժարվելով երէցփոխութիւնից՝ եկեղեցու սեփականութիւնը սրբութեամբ յանձնում է վերստուգիչ յանձնաժողովին, որի նախագահն էր տողերիս գրողը։ Բայց մի փոքրիկ գումար մնում է դարձեալ նրա մօտ շահեցնելու նպատակով Թեմ. առաջնորդի՝ Քութայիս եղած ժամանակ, ի հարկէ, այդ բանը նրան յայտնի եղաւ։ Եւ ահա այս օրերս Թիֆլիսից կարգադրութիւն եղաւ հոգաբարձութեան, որ անյապաղ այդ գումարը առնվի նախկին երեցփոխից։ Ի հարկէ, հոգաբարձութիւնը այդ գրութեամբ դիմում է նրան, որը, վշտացած, գումարն իր աճեցրած տոկոսներով յանձնում է հոգաբարձութեան։

Ահա այդ է ականաւոր կարգադրութիւնը, որը և նիւթական զրկանքի ենթարկեց եկեղեցուն։ Ցոնքը շինելու տեղ աչքն էլ հանում են...

Բայց այդ բոլորը գուցէ մի կերպ տանելի լինի։ Սակայն մենք հայ քրիստոնեայ ենք, չարչարանքի օրեր են, մեծ պաս է. ո՞ւր է մեր քահանան, ո՞ւր գնանք աղօթելու, ու՞մ մօտ խոստովանվենք, ո՞րտեղ հաղորդվենք...։

Որովհետև բոլոր միջոցները սպառած ենք, ուստի այս տխուր հանգամանքի վրա ստիպված ենք հոգևոր բարձր իշխանութեան ամենալուրջ ուշադրութիւնը դարձնել։ Ս. Նազարեան

—

Հայ գաղութի կեանքից

Նալտա, 26 յունվարի

Յունվարի 8-ին այստեղի կոմիտէտը փոխադրեց Թիֆլիսի Կենտր. Բիւրոյին 1000 ռ., որից 500 ռ. որոշված է տալ կամաւորների կարիքների համար, իսկ մնացեալը յօգուտ փախստականների։

Յունվարի 24-ին Նալտայի գաղութի ժամանակաւոր կոմիտէտը փոխադրեց Էջմիածին յանուն Վեհափառ] Կաթողիկոսի՝ յօգուտ փախստականների՝ նորից 500 ռ.։ Դարձեալ շարունակվում է նուէրների ժողովումն յօգուտ փախստականների թէ միանուագ և թէ ամսավճարներով։

Տեղիս հայ կանանց շրջանի որոշ խմբի անդամները այս օրերս սկսել են ժողովել յօգուտ փախստականների հագուստեղէն թէ հին և թէ նոր։ Միայն չը գիտենք թէ ինչու՝ տեղիս հայերի հարուստ մասը շատ սառն է վերաբերվում, նամանաւանդ բարեգործական ընկ. վարչութեան անդամները, որոնք կոմիտէտի անդամների դիմումին՝ անորոշ դիրք են բռնել։

Մանուչեան

—

Դարձեալ գաղթականների մասին

Վաղարշապատ, 27 յունվարի

Զօրանցներում եղած գաղթականները ուղարկվեցին Երևան և ապա նրա շրջակայ գիւղերը։ Վերջին ցուցակագրութեան համաձայն, Վաղարշապատում կան (մասնաւոր տներում) մօտ 150 ընտանիք. եթէ ընտանիքը ընդունենք 7 անդամից, լինում է 700 գաղթական։

Երէկ նորից եկան մօտ 30 հոգի, որոնք բառիս բուն նշանակութեամբ չքաւորներ էին։ Ինչպէս իրանք պատմում էին, իրանցից քիւրդերը տարել էին մօտ 40 հարսներ և աղջիկներ։ Սրանց բերել էին իրանց հետ 5—7 բոլորովին որբ երեխաներ։ Սրանց տեղաւորեցին Վրթանէս վարդապետը և Վ. ք. Աղաղադեանը Վաղարշապատում. իսկոյն վառարան, փայտ, թէյ, շաքար ու շորեր տուեցին ու մի քանի մխիթարական խօսքերով թշուառներին մի փոքր սփոփեցին։ Դրանց պատմելով՝ քիւրդերը կտրել են իրանց ներկայութեամբ մի կնոջ երկու ստինքը, և խեղճ կինը չը կարողանալով տանել այդ տանջանքը՝ մեռել է. իսկ թալանի և աւարի մասին այնքան ենք լսել, որ աւելորդ է գրելը։ Այժմ գաղթականներին հաց է բաժանում Վ. ք. Աղաղադեանը վանքի բակում Վեհից կարգված յանձնաժողովի կարգադրութեամբ։ Հաց ստանում են նաև Վաղարշապատի մօտիկ շրջապատում գտնված գիւղերում ապաստանած գաղթականները։

Եղանակները շատ նպաստաւոր են։ Այսօր երևացին գարնան աւետաբեր թռչունները՝ սարեակները. տեսնենք ինչպիսի գարուն է գալու մեզ համար։ Թղթակից

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Բացվեց Կովկասի քաղաքների միութեան մէջ մտնող քաղաքների քաղաքագլուխների համագումարը Ալ. Խատիսեանի նախագահութեամբ։ Նիստին մասնակցում է պրոֆ. Ե. Ի. Մարցինովսկի, համառուսական քաղաքների դաշնակցութեան կողմից, որպէս կօնսուլտանտ վարակիչ հիւանդութիւնների։ Առաջին նիստը նուիրված էր այն բանին, որ ժողովին ծանօթացնեն միութեան գործունէութեան հետ և նոր հիւանդանոցներ բանալու հարցին, նաև միութեան կողմից մի ներկայացուցիչ ընտրելու Մոսկվայում կայանալիք քաղաքագլուխների համագումարին մասնակցելու համար։ Ներկայացուցիչ ընտրվեց Բագուի քաղաքագլուխ Լ. Լ. Բիչ, որը ամսիս 9-ին մեկնեց Մոսկվա։

◆ Այսօր, ամսիս 11-ին, կը կայանայ քաղ. Թաղական սանիտարական հոգաբարձուների և Թաղական սանիտարական բժիշկների խորհրդակցութիւնը քաղաքի սանիտարական հսկողութեան մասին հրահանգներ մշակելու համար, որոնց նպատակն է լինելու նախազգուշական միջոցներ թելադրել վարակիչ հիւանդութիւնների, մասնաւորապէս տիֆի դէմ։

◆ Կիրակի, ամսիս 8-ին, տեղի ունեցաւ Կարսում տիֆի վարակումից վախճանված բժիշկ Վահան Տէրտէրեանի թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ Հանգուցեալը դուշէթցի էր, աւարտել էր Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտէտը։ Սկզբում որպէս բժիշկ ծառայում էր Միքայէլեան հիւանդանոցում, յետոյ Արամեանի անուան հիւանդանոցում։ Բայց շուտով նա թողնում է իր պաշտօնը այստեղ և իր վաղեմի ցանկութիւնը—ժողովրդին մօտ լինել—կատարելու համար, նա փոխադրվում է Բորչալուի գաւառը որպէս գիւղական բժիշկ։ Այստեղից նա շուտով տեղափոխվում է Արդահանի շրջանը, ուր նա վարում է շրջանային բժշկի պաշտօն մինչև զօրահաւաքը, որի ժամանակ փոխադրվում է Կարսի զինւորական հիւանդանոցը, ուր և ծառայութեան միջոցին վարակվում է տիֆով։

◆ Փետր. 9-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց Բորչալուի գաւառի ազնուականութեան պարագլուխ Նիկ. Սագինով, որ այդ պաշտօնում ծառայում էր երրորդ տարին։

◆ Յունվարի 18-ից մինչև փետրվարի 3-ը կովկասեան ռազմաբեմ է ուղարկված՝ Սարիղամիշի ուղղութեամբ 12,296 պուդ, Ծարսխի շրջանը՝ 2977, իսկ արևմտեան սահմանը՝ 56 պուդ, ընդամենը՝ 15,329 պուդ իրեր։

◆ Ոստիկանապետը արգելեց երէկ ներկայացնել Արցիբաշեվի «Война» պիէսը։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Երևանի քաղ. դումայի ընտրութեան համաձայն, հաստատվում է քաղաքագլխի պաշտօնում երդ. հաւ. Սմբատ Արտ. Խաչատրեան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Դրամա

Արտիստիկ. Ընկ. Թատրոնում երկուշաբթի, փետրվ. 9-ից սկսվեցին Պ. Բարատովի և Ա. Պոլօնսկիի ռուս դրամատիքական խմբի ներկայացումները։

Սէզօնի բացման առիթով ներկայացվեց սպանական դրամատուրգ Պիէր Լուիսի 4 գործ. և 5 պատկերով պիէսը «Կինը և խեղկատակը» անունով («Женщина и Паяцъ»).

Խմբի հռչակը և գուցէ մեծ պասի առաջին շաբաթվայ թատրոնական ներկայացումների բացակայութիւնը այդ օրը թատրոն էին գրաւել ահագին բազմութիւն, որի մի մասը տեղ էր գրաւել նոյնիսկ օրկէստրում։

Առաջին ներկայացումը անպայման հաճելի տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ Պիէսի հերոսներն են Դօն-Մատէօն (Պետրով) և Կօնչա Պերէսը (տ. Պաւլօվա), որոնց միջև տեղի է ունենում սիրող տղամարդու և սիրող կնոջ յամառ ու երկար պայքար։ Սէրը—ըստ պիէսի հեղինակի—պատերազմ է. Կօնչա Պերէսը ձգտում է իր ազատ հոգով ձեռք բերել կատարեալ երջանկութիւն կեանքում։ Կօնչան խուսափում է Դօն Մատէօյից, որ արդէն բարձի թողի է արել իր առաջին սիրուհուն և, իբրև հարուստ անձն, ոչ մի նիւթական միջոցի առաջ կանգ չէ առնում իր ցանկութեան միակ առարկային՝ Կօնչային տիրանալու համար։ Իսկ վերջինս, Դօն-Մատէօյին պատժելու, տանջելու նպատակով, խաղում է նրա առաջ մի տեսակ ֆլիրտ, թէև չը խախտելով իր կուսութիւնը, իբրև վեհանձն ու ուժեղ կամքի տէր կին։ Սակայն երկուստեք սիրոյ այդ պայքարը վերջ ի վերջոյ յանգում է դարձեալ երկու էակների միաւորման...

Պիէսը նայվում է հետաքրքրութեամբ։ Ունի սրամիտ տեսարաններ։ Բեմադրութիւնը նոյնպէս աջող էր։

Առաջին օրը հասարակութեան ուշադրութիւնը կենտրոնացաւ վերոյիշեալ երկու գլխաւոր դերակատարների՝ Պետրովի և Պաւլօվայի վրա։ Մանաւանդ վերջինս առաջ բերեց նպաստաւոր վերաբերմունք դէպի ինքը իր վերին աստիճանի սահուն, ազատ ու պարզ խաղով։ Անշուշտ Պաւլօվան առաջիկայում ցոյց է տալու իր տաղանդը աւելի լայն չափերով։ Վատ չէր ի հարկէ Պետրովը իր դերում, որը կը սազէ աւելի շուտ Բարատովին։

Ներկայ խմբի աջողութիւնը կասկածից դուրս պէտք է համարել։

Բեչենչենտ

Ց. Գ.—Այսօր կը տրվի առաջին անգամ նոր կօմեդիա՝ «Ես այսպէս եմ կամենում»։

—

Օպէրէտ

Ամիրաղօյի օպէրէտային խմբի առաջին ներկայացումը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, փետրվարի 9-ին, Արքունական Թատրոնում, գրաւել էր թատրոնը ծայրից-ծայր լիքը հասարակութիւն։

Խումբը իր առաջին ներկայացմանը դրել էր Վալենտինովի «Жрица огня» օպէրէտը, որն անցեալ տարի նոյն այդ խումբը, մասնակցութեամբ Շուվալօվայի և Գլօրիայի, խաղաց Թիֆլիսում մի քանի անգամ, իւրաքանչիւր անգամն էլ թատրոնը լիքը հասարակութեան ներկայութեամբ։

Այդ օպէրէտի վերին աստիճանի գեղարուեստականութեան և արևելեան մելօդիաներով հարուստ երաժշտութեան մասին անցեալ տարի թերթիս էջերում տրվել է նպաստաւոր մանրամասն գնահատութիւն։

Այս անգամ ևս յիշեալ օպէրէտի բեմադրութիւնը անցաւ վերին աստիճանի հարթ, շնորհիւ դերակատարների գեղեցիկ անսամբլի, բալէտային աջող կազմակերպված խմբի, օրինակելի օրկէստրի, որ կատարելապէս թողնում է սիմֆօնիական օրկէստրի բնաւորութիւն, բազմամարդ երգեցիկ խմբի և՝ որ անհրաժեշտ է ներկայացման էֆէկտային մասը աւելի գունեղ դարձնելու համար՝ բեմական հարուստ բուտաֆօրիայի և դէկօրացիաների։

Դերակատարների թւումն էին ծանօթ դէմքեր՝ շնորհալի երգչուհի Բարվինսկայա, տաղանդաւոր կոմիկ Օրլովսկի, օպէրէտային վաստակաւոր արտիստ Դրագով, բարիտօն Ջելինսկի և բաս Իլինսկի, որոնք իրանց սահմանված դերերը կատարեցին անհամեմատ շատ գեղարուեստօրէն և թողին հասարակութեան վրա հաճելի տպաւորութիւն։ Խաղացողների թւում մեզ անծանօթ դէմքեր էին միայն կասկադնի-արտիստուհի Դիզի-Դօրն և տէնօր Դօբրինին, որոնք նոյնպէս ապացուցին իրանց նպաստաւոր ընդունակութիւնները։

Կոմիկ Օրլովսկի երրորդ գործողութեան ընթացքում կատարեց օրվայ չարիքի շուրջը պատեղ մի շարք սրամիտ կուպլէտներ՝ արժանանալով բուռն ծափահարութիւնների և bis-երի։

Պլաստիկական և տեխնիկական խոշոր առաջադիմութիւն է ցոյց տալիս անցեալ տարվանից ծանօթ բալերինա Մարիա Շաբելսկայա, որ այժմ կրում է «պրիմա-բալերինա» անունը։

Օրկէստրը և խաղացողներին ղեկավարում էր իր հմտութեամբ հանրածանօթ դիրիժօր Վալենտատի։

Ներկայացման սկզբում օրկէստրը երեք անգամ նուագեց ռուսական ազգային օրհներգը։ Նոյնը կատարվեց ներկայացման վերջը, այս անգամ որպէս հայրենասիրական ապօթէօզ, արտիստների և օրկէստրի մասնակցութեամբ։ X.

—

Ժողովրդական Տուն

Անցած երկուշաբթի Հայկական Դրամատիքական խմբակցութիւնը ներկայացրեց Վ. Փափազեանի «Ժայռ» 4 գործ. դրաման։

Խաղը ընդհանրապէս անցաւ բաւարար։

Դերակատարներից լաւ էր, տեղ-տեղ նոյնիսկ շատ աջող, պ. Գաւրօշը՝ Գրիգոր աղա Վարակեանի դերում։ Այս սիրողը դերասանի տպաւորութիւն է թողնում և բեմի վրա իրան պահում է ազատ-համարձակ։ Նրա կեցուածքը, ձայնը, շարժումները այդ դերի մէջ վերին աստիճանի բնական էին, իսկ խօսելու շեշտականութիւնը հոգեբանօրէն ու տեղին։

Նոյնը չենք կարող ասել սիրող պ. Երամեանի մասին, որ խաղում էր Ալէքսանդրի դերը։ Սա բեմի վրա խօսում է երգեցիկ ձայնով և գործ է ածում բեմական շարժումներ, որոնք թուլացնում են խաղի տպաւորութիւնը։

Լաւ էին տ. Ցամիկ (Թէրեզա), պ. Դաւիթ-խան (գիւղաքաղաքի հաշտարար դատաւոր), տիկ. Զաբէլ (Հռոմսիմ Մանուկեան) և պ. Սերժ (Մանուկեանների ծառան)։

Տիպիկ էր գիւղացի Բաղդասար ամիի դերում պ. Յարութիւնեան II։ Թոյլ և անհամապատասխան էր պ. Մարութեան Սահակ աղա Մանուկեանի դերում։ Միւսները բաւարար էին։

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։

Ս. Ր.

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս գիտենք լրագիրներից, Լեհաստանում կազմվեց «Լեհական ազգային կոմիտէտ», որի նպատակն է միութիւն առաջ բերել բոլոր լեհերի մէջ, անկախ նրանց հայեացքներից և համոզմունքներից և, այդ միութեամբ իրագործել ռուսաց զօրքի Գերագոյն Հրամանատարի կոչը։ Այդ ազգային կոմիտէտի կազմի մէջ մտել են Պետական Դումայի և Խորհրդի լեհ պատգամաւորները և երկրի հասարակական զանազան գործիչները։

Ազգային կոմիտէտը հրատարակեց մի կոչ, ուղղված լեհերին, որի մէջ յայտնում է, թէ Մեծ Իշխանի կոչը, որի մէջ Լեհաստանի բոլոր մասերի միացումը համարված է արիւնահեղ պատերազմի մեծ նպատակներից մինը, նուիրական պարտականութիւն է դնում ամենքի վրա մոռանալ բոլոր կուսակցական տարբերութիւնները և համախմբվել վեհ նպատակի իրականացման գործի շուրջը։ Սակայն ազգային կենտրոնական կոմիտէտի կազմը առաջ բերեց լեհական մամուլի մէջ տարբեր կարծիքներ։

Կոմիտէտի, նոյնպէս և ազգային ներկայացուցչութեան կողմնակից են ազգային դեմօկրատական երկու օրգանը՝ „Gazeta Warszawska" և „Gazeta Poranna", նաև ազգայնական „Dzien"-ը, Բանեն Գօզլեվսկիի (սա կոմիտէտի անդամ է) օրգան „Kurjer dla Wszystkich"-ը, որ հանդիսանում է Վարշավայի կղերական շրջանների արտայայտիչը, նոյնպէս հաւանութիւն է տալիս այդ կոմիտէտի կազմակերպութեանը, նոյնպէս նրա կոչին, յայտնելով միաժամանակ, որ կոմիտէտը մեծ ծառայութիւն արած կը լինի, եթէ միացնի Լեհաստանի քաղաքական մտքի չը վերջացած գործը։

Միւս լրագիրները՝ „Dziennik Polski", „Kurjer Poranny" և "Nowa Gazeta"-ն գտնում են, որ լեհական հասարակութիւնը չը պէտքէ հակառակի այդ կոմիտէտին, բայց կարող է միայն խստութեամբ որոշել նրա բնաւորութիւնը և դերը։ Այդ կողմից բոլոր վերև բերված թերթերը միանում են իրանց կարծիքներով, միաժամանակ ընդգծելով, որ կոմիտէտը բլոկ է երկու կուսակցութեան՝ ազգային-դեմօկրատների և ռէալիստների (ոչ բոլորի), և այդ պատճառով կոմիտէտը պէտք է կոչվի «պահպանողական կոմիտէտ»։

«Dziennik Polski», որ մօտենում է ռէալիստական ուղղութեան, մատնանշում է, որ կոմիտէտի մէջ կան 14 ազգային-դեմօկրատներ, 6 ռէալիստներ և 7 հոգի էլ, որոնք միանում են այդ երկու կուսակցութեան։ Դրա հետ միաժամանակ ազգային դեմօկրատիան կոմիտէտի մէջ ունի իր բոլոր ղեկավարներին, իսկ ռէալիստների մէջ չը կան նրա ղեկավարներից շատերը։

«Dziennik» ողջունում է պահպանողական կոմիտէտը, բայց յայտնում է, որ եթէ այդ կոմիտէտը կամենար լինել համազգային կազմակերպութիւն, պէտք է ժխտել նրա այդ իրաւունքը։

«Ժողովրդի մեծ մասը կանգնած է հեռու ազգային կոմիտէտից և նրա հայեացքներից։ Որպէսզի համոզվենք դրանում, բաւական է լսել Վարշավայի մամուլի արձագանքը»։

Եթէ կարելի է ճանաչել կոմիտէտի լիազօրութիւնը, որպէս աջակողմեանների կազմակերպութիւն, այդ դէպքում անհրաժեշտ է նրան զուգընթաց կազմակերպել մի այլ կոմիտէտ դեմօկրատական։ Այդ երկու կոմիտէտների միջև կարող է լինել գործունէութիւն և աշխատանքի իրաւական բաժանումն. պահպանողական կոմիտէտը իր էութեամբ ճանաչված է միջնորդ լինելու լեհական հասարակութեան և պետական հիմնարկութիւնների միջև, իսկ դեմօկրատական կոմիտէտը պէտք է բանակցութիւններ սկսի հասարակական շրջանների հետ, նպատակ ունենալով ծանօթացնել նրանց լեհական ձգտումների և նպատակների հետ։

«Kurjer Poranny» նոյնպէս գտնում է անհրաժեշտ, որ ազգային կոմիտէտի հետ զուգընթաց գործունէութիւն լինի, որ չընդհատի նրա աշխատանքները, և այդ կոմիտէտի մէջ տեսնում է միայն «Լեհաստանի աջակողմեան խմբերի միացումը»։

«Nowa Gazeta»-ն նոյնպէս ենթադրում է, որ կոմիտէտի կոչի մէջ պարզ չէ մատնանշված կոմիտէտի կազմի միակողմանիութիւնը։

Գալիցիական «Kur. Lub.»-ը ազգային կոմիտէտը համարում է «չը լսված անգամ մեր յարաբերութիւնների ժամանակ ժողովրդի ներկայացուցչութեան հետ»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 փետր.

Վրաստանի մեծահռչակ գուսան Ակակի Ծերեթելիի մահվան առիթով յայտնում եմ իմ ցաւակցութիւնը, և նրա չը տպված երկերի հրատարակութեան ֆոնդին իբրև նուէր յատկացնում եմ իմ հրատարակած վրացերէն լեզուով Րաֆֆիի «Անմեղ վաճառք» «უმანკო მსხვერპლი» գրքերից 50 օրինակ։ Մ. Զմշկեան

—

Արմաւիր, 18 յունվարի

Թանգագին ամուսնուս՝ Ջաւադ-բէկ Բալուղեանի անմոռանալի մահվան առիթով հայոց ազգային հաստատութիւններ, մամուլի ներկայացուցիչներ, խմբագրութիւններ, հայ և օտարազգի հասարակական գործիչներ, ամուսնուս սիրարժան ընկերներ և մտերիմ պաշտօնակիցներ մխիթարական հեռագիրներով, ցաւակցական գրութիւններով ամոքել են ինձ և իմ ընտանիքին վիճակված ծանր վիշտը և կամ յարգել հանգուցեալի յիշատակը, մամուլի էջերում համակրական արտայայտութեամբ գնահատելով նրա գրական և հասարակական գործունէութիւնը։ Խորապէս զգացված իմ սգոյ պահին ցոյց տրված այդպիսի ուշադիր վերաբերմունքից, ամենքին, այլ և մեծարգոյ խմբագրութեանդ, խորին շնորհակալութեանս հաւաստիքն եմ յայտնում։

Վարվառէ Բալուղեան

—

Էջմիածին, 27 յունվարի

Թող թոյլ տրվի պատասխանելու յարգելի պ. Արշ. Մխիթարեանին, որ «Գիւղատնտեսութեան վիճակը 1914 թ.» յօդուածագիրը կողմնակի դիտող է և ոչ մի իրաւունք չունի անպաշտօն կերպով ներս թափանցելու «Գիւղատնտես» խմբագրութեան գաղտնիքների մէջ։ Այդ թերթի ճակատին շարունակ տպված է եղել՝ «Օրգան Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան»։ Մենք դատում ենք ըստ այդ մակագրութեան։

Պր. Մխիթարեանի նամակում ցաւելով կարդացինք, որ «այդ թերթը («Գիւղատնտես») մինչև այսօր էլ դեռ պաշտօնապէս չէ անցել Գիւղատնտեսական Ընկերութեան վարչութեան ձեռքը»։ Իսկ ինչ էին այն յայտարարութիւնները, թէ նոր-տարուց սկսած նոր վարչութիւնը թերթը կանոնաւորապէս հրատարակելու է. ինչ պատահեց։

Գ. Տէր-Ռուբինեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ՄՈՍԿՎԱ. Երուանդ Յարութիւնեանին.— Խնդրում ենք յայտնել ձեր ապահով հասցէն, որպէսզի կարողանանք թէ թերթն ուղարկել և թէ նամակ։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկրչ. հիւանդ. և չաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—160

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլօմբելու համար վճարը սահմանվում է ըստ հաստատված տակսայի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադօվը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ [illegible] օպերացիաներ և շատ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—78

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնովսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—31

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Լ. ՏՈԼՍՏՈՅԻ հետեւեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տոլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տոլստոյից, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . . . . 5 կ.
4) ՔՈՅՐԵՐԸ, թարգմ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
4. 0—1

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.